Եվրոպայի ու Ռուսաստանի միջեւ պառակտումից ի վեր Ռուսաստանի ՀՆԱ-ն աճել է, գործընկերությունն Ասիայի հետ զգալիորեն աճել է: Ի հակադրություն դրա, Եվրոպայի տնտեսական պայմանները վատթարացել են, քանի որ ԵՄ-ն կորցրել է էժան էներգիայի հասանելիությունը, բացի այդ՝ իրավիճակը սրվել է Իրանի պատերազմի պատճառով:

Կարդացեք՝ էջ 4

Մեկ շաբաթ անց՝ ապրիլի 19-ին, ԵՄ տարածքում տեղի ունեցավ ոչ պակաս կարեւոր եւ նշանակալի մեկ այլ իրադարձություն եւս՝ Բուլղարիայում տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում հաղթանակ տարավ 62-ամյա Ռումեն Ռադեւը, որին անգամ եվրոպական մամուլն է ներկայացնում որպես պրոռուսական կողմնորոշում ունեցող:

Կարդացեք՝ էջ 5

Այո, քննադատում են ինձ, եւ դա շատ է ազդում իմ կյանքի, իմ առօրյայի վրա, որովհետեւ լինեն անձնական, թե աշխատանքային հարաբերություններ, դա ազդում է այդ հարաբերությունների վրա: Քննադատում են, վնասում են ինձ՝ վատ բառամթերքով, բայց ես համերաշխ եմ ապրում իմ սրտի, հոգու հետ: Համարում եմ, որ այդպես ճիշտ է:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 66 (4201), 22 ապրիլ, չորեքշաբթի, 2026

www.hraparak.am

2025 թ. նոյեմբերի 24-ի գիշերը Նոր Նորքի Շոպրոնի փողոցում սահմռկեցուցիչ դեպք տեղի ունեցավ՝ մի խումբ անձինք վիճաբանել էին, ծեծկռտուք էր եղել, ապա վեճի մասնակիցներից երկուսը մեքենան վարել էին 31-ամյա Բորիս Արզումանյանի վրա՝ մի քանի անգամ անցել ողջ մարդու մարմնի վրայով, որի արդյունքում նա մահացել էր: Իրավապահները պարզել էին, որ միտումնավոր վրաերթ է եղել: Արզումանյանը «Հայաստան» դաշինքի պատգամավորի թեկնածու էր եղել 2021-ին: Մեղավորները հայտնաբերվեցին՝ ձերբակալվեցին ԵԿՄ անդամ Ավետիս Խաչատրյանի՝ Մասիվցի գիժ Ավոյի թոռ Հակոբ Խաչատրյանը եւ ավտոմեքենան վարած Արտակ Դիլանյանը: Վերջինս կալանավորվեց: Մեր տեղեկություններով, մոտ 2 ամիս առաջ 2018-ի թավշյա իրադարձությունների ժամանակ թմբուկ խփելով հայտնի դարձած դատավոր Դավիթ Արղամանյանը փոխել է սպանության մեջ մեղադրվողի կալանքը՝ տնային կալանք է տվել, համակցված գրավով: Չնայած Դիլանյանի պաշտպանը հերքեց այս լուրը, սակայն Գլխավոր դատախազությունից հաստատեցին, որ առաջին ատյանի դատարանը փոխել է Արտակ Դիլանյանի խափանման միջոց կալանքը, որից հետո դատախազությունը վերաքննիչ դատարան բողոք է տարել, եւ դատարանը բավարարել է միջնորդությունը՝ Բորիս Արզումանյանի սպանության մեջ մեղադրվողը կրկին կալանավորվել է:

Նիկոլ Փաշինյանին հանգիստ չի տալիս Գյումրիում կրած ֆիասկոն, եւ այսօր նա որոշել է կոտրել Գյումրիի դիմադրությունը՝ նոր ջերմ տեսարաններ բեմադրելով հայրաքաղաքում, որպեսզի հակառակն ապացուցի եւ հանրությանը համոզի, որ Գյումրին, որտեղից ինքը 18-ին սկսեց իր «հեղափոխությունը», չի մերժում իրեն: Մեր տեղեկություններով, կիրակի օրվա ավտոերթից ու Վարդանանց հրապարակում ունեցած անհաջող համերգից հետո, որին քիչ թվով շիրակցիներ էին մասնակցում, Փաշինյանը պաշտոնական այց է ծրագրել եւ այսօր Գյումրիում մասնակցելու է դպրոցի բացման: Մեզ ասացին, որ կայցելի նաեւ որոշ համայնքներ, որտեղ նախապես ծրագրված ջերմ ընդունելություն կբեմադրեն, որ «ջրեն» նախորդ անգամվա տխուր տպավորությունը: Ավելի վաղ գրել էինք, որ հենց իշխանությունների ուսումնասիրություններով՝ իրենց դիրքերը թույլ են Շիրակի եւ Լոռվա մարզերում: Առաջիկա շաբաթներին հենց այդ ուղղությամբ են աշխատելու, որ վարկանիշ բարձրացնեն: Ինչպես նաեւ ձերբակալություններ են իրականացնելու, ինչպես արեցին Գյուլագարակում, որ մարդկանց վախեցնեն՝ չաջակցեն ընդդիմությանը:

Մի համեստ առաջարկ

Միանգամայն հասկանալի է մեր հանրության պահանջը՝ ուժեղ, լավ ծրագրով ու մաքուր անցյալով թեկնածու տեսնելու հետ կապված: Մարդիկ հոգնել են ոչ պրոֆեսիոնալ, կիսագրագետ, պաշտոնը հարստացման միջոց դիտող, արագ հղփացող ու մեր երկրի ապագան վտանգող գործիչներից: Հիմա առավել եւս բարդ է մարդկանց հույս ու հավատ ներշնչելը, որովհետեւ տեսել են 88-ի եւ 2018-ի հեղափոխությունների արդյունքում իշխանության եկածների գործունեությունը, տեսել են Արցախից եկած գործիչների, պատերազմում հաղթանակ ապահովածների, հաղթանակից հետո իշխածների գործունեությունը եւ բոլորից անխտիր՝ դժգոհ են: Անգամ փողոցից եկած հասարակ մարդու, ինքն իր ճանապարհը հարթած ընդդիմադիրի են տեսել իշխանության ղեկին եւ համոզվել են, որ մեծ չէ տարբերությունը՝ մարդը ընտրվել է, թե ընտրակեղծիքներով է երկրի ղեկավարի պաշտոնը զբաղեցրել: Այս պարագայում՝ ինչպես ու ինչով առաջնորդվի ՀՀ քաղաքացին, որ կրկին չսխալվի եւ ինքն իր ձեռքով հերթական չարիքին չնստեցնի վարչապետի աթոռին: Մանավանդ՝ կրակից վառվածը, գիտեք, մոմին էլ է փչում: Դեռ առիթ կլինի առաջադրված քաղաքական ուժերին հատ-հատ անդրադառնալու, մանավանդ՝ դեռեւս առաջադրումները չեն ավարտվել: Բայց մի համեստ խորհուրդ-առաջարկ անեմ, որն ունի-վերսալ է ցանկացած ընտրության դեպքում: Նախ, ուշադիր լսեք առաջադրված թեկնածուների խոսքը եւ եթե ագրեսիա, չարություն, պառակտում ու թշնամանք կնկատեք, կզգաք, որ հերյուրանքներ է տեղում մրցակիցների հասցեին, միանգամից մերժեք նրան: Պառակտիչ ու ագրեսիվ խոսքը պետք է մերժվի, նման լեքսիկոնով անձը չպետք է վարչապետ դառնա: Եթե մարդը ոչ թե իր արժանիքներն է ներկայացնում, այլ մրցակիցների թերություններն է ձեր աչքը կոխում, վարկաբեկում ու վատաբանում, ուրեմն արժանի չէ այդ բարձր պաշտոնին:

«Ուժեղ Հայաստան» կուսակցության հիմնադիր-առաջնորդ Սամվել Կարապետյանը, մեր տեղեկություններով, օրերս հանդիպել է իրենց նախընտրական ցուցակում տեղ գտած մի քանի տասնյակ ներկայացուցիչների հետ, զրուցել նրանց հետ, փորձել հասկանալ՝ ովքեր են 36 թեկնածուները, որոնց անունները հրապարակվել են՝ որքանով են արժանի: Դա, կարելի է ասել, յուրօրինակ ստուգարք է եղել թեկնածուների համար: Հանդիպումից հետո Կարապետյանը, ըստ մեր աղբյուրի, որոշ խմբագրումներ է արել ցուցակում՝ ոմանց հանել, ոմանց «ռակիրովկաներ»՝ տեղերի փոփոխություն է արել: Նշենք, որ մինչ այս հրապարակված 36 թեկնածուները միայն «Ուժեղ Հայաստան» կուսակցության ներկայացուցիչներն էին, ցուցակը երեկ համալրվեց դաշինքի անդամ քաղաքական ուժերի ներկայացուցիչներով:

ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՄ ԱՐՇԱՎԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է

Նիկոլ Փաշինյանը շարունակում է արշավը Հայ առաքելական եկեղեցու եւ նրա սպասավորների դեմ: Պարզապես նախընտրական շրջանում դա ավելի անաղմուկ է անում: Գրել էինք, որ ՔԿԾ պետի հրահանգով կալանավայրերը սպասարկող հոգեւորականների, մասնավորապես՝ Տեր Գրիգոր քահանա Հովհաննիսյանի մուտքն է արգելել ՔԿՀ, նա 10 տարուց ավելի այցելել է ցմահ դատապարտյալներին: ՔԿՀ-ներին կցված հոգեւոր սպասավորներն անվճար հիմունքներով երկար տարիներ ծառայություն են իրականացնում, ընտրվել են կաթողիկոսի որոշմամբ, Մայր Աթոռում ՔԿՀ-ները սպասարկող բաժին կա: Նիկոլ Փաշինյանը որոշել է այդ գործը եկեղեցու ձեռքից առնել՝ կաթողիկոսին զրկելով եւս մի լծակից: Պատմեցին, որ շաբաթներ առաջ ՔԿԾ-ից կապ են հաստատել գործող հոգեւոր սպասավորների հետ, առաջարկել են իրենց հետ պայմանագրեր կնքել, ընդորում՝ վճարովի հիմունքներով, փորձելով շահագրգռել, որ տիրադավների շարքերը համալրեն, սակայն նրանք չեն համաձայնել: Դրանից հետո սկսել են պայմանագրեր կնքել Փաշինյանի կողմն անցած տիրադավների թեմերի հոգեւորականների հետ: Թե որքան են վճարելու նրանց, առաջիկայում կպարզենք: Նշենք, որ այժմ ՔԿՀ-ների հոգեւոր տեսուչը Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Իսահակ վարդապետ Պողոսյանն է, որն առաջինն է մերժել իշխանության գործարքը: Ըստ ամենայնի, շուտով նրան փոխարինող կգտնեն: Հիշեցնենք, որ Սուրեն Պապիկյանի հրամանով էլ փետրվարի 1-ից դադարեցվել է ԶՈՒ հոգեւոր ծառայողների գործունեությունը ՊՆ համակարգում: Իսկ մարտի 27-ին Փաշինյանը Ներման հարցերի հանձնաժողովի կազմում էր ընդգրկել Արման Սարոյանին՝ Մայացոտնի թեմի նախկին առաջնորդին:

ԴԱՏԵՐԱՅՆ

Ազգային Ժողովում ՀՀ կառավարության ծրագրի 2025 թվականի կատարողականի քննարկման ժամանակ պաշտպանության նախկին նախարար, «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանի՝ 44-օրյա պատերազմին առնչվող ելույթը պատերազմից 6 տարի անց բուռն արձագանքի արժանացավ եւ արդեն քանի օր է՝ քննարկվում է:

ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆԸ ԻՆՉ ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է, ՃԻՇՏ Է ԱՍԵԼ՝ ՄԻ ԲԱՆ ԷԼ ՔԻՉ Է ԱՍԵԼ



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

Ապրիլի 17-ին Սեյրան Օհանյանը խորհրդարանում որոշեց պատասխանել Փաշինյանի բազմիցս հնչեցրած եւ կառավարության ապրիլի 2-ի նիստից հետո կրկնած այն հայտարարությանը, թե Արցախից փախել են, ճողոպրել են, եւ հատկապես «փորները 3 մետր դեմները ցցած» գեներալներին վերաբերող արտահայտությանը: Նա Փաշինյանին հակադարձեց. «Պատերազմի ժամանակ ոչինչ չեք արել երկիրը մոբիլիզացնելու, հաջողություններ ունենալու, մեր առջեւ դրված խնդիրը կատարելու համար: Իսկ մենք ի վիճակի ենք եղել այդ խնդիրը կատարել: Փաշինյանն ասում է՝ գեներալները փախել են: ԱԺ ղեկավարությունը, պատգամավորները եկել էին այնտեղ, եւ անհրաժեշտություն կար ՄՈԲ ռեսուրսի, բայց լայաղ չարեցին գոնե մի քանի ժամով գնան աշխատեն այդ ՄՈԲ ռեսուրսի հետ, թողին փախան: Հիմա ո՞վ է փախել, գեներալնե՞րն են փախել, թե՞ ԱԺ այն պատգամավորները, որոնք այնտեղ են եղել»: Ապա շեշտեց, որ Արցախի պաշտպանության բանակը 283 կմ պաշտպանության գոտի է ունեցել, որից 265 կմ-ն մինչեւ հոկտեմբերի 27-ը պահել են. «Այն տարածքով են ձեր ասած գեներալները փախել, որ ես գտնում եմ, որ այդ պատասխանատվությունը հենց ձեր վրա է: Եթե ՊԲ-ն է որոշում ընդունում, հաստատում է ԳԾ-ն կամ Ղարաբաղի նախագահը, իսկ եթե մի քանի զորամիավորում են՝ ՊԲ-ն եւ հայաստանյան զորամիավորումները, ապա ԳԾ պետն է որոշում ընդունում, եւ հաստատում եք դուք: Ձեր պատասխանատվության գոտիով է Ադրբեջանը շրջանցել, եկել հասել Շուշի, Բերձոր եւ ՀՀ սահմաններ՝ Գորիս, Կապան եւ Մեղրի»:

Նրա խոսքից հետո համացանցում գրառում կատարեց ռուսաստանյան մեդիամագնատ Արամ Գաբրիելյանովը՝ ՀՀ ԶՈՒ ԳԾ նախկին պետի՝ Օնիկ Գասպարյանի հետ ունեցած իր հանդիպումից մանրամասներ հանրայնացնելով, որը կապված էր «Իսկանդերի» կիրառել-չկիրառելու, Շուշին հանձնելու հետ: Ընդ որում՝ նա առաջին անգամ չէ, որ հայտարարում է, թե Շուշին հանձնվել է Փաշինյանի հրամանով: Եվ տեւական լռությունից հետո ԶՈՒ ԳԾ նախկին պետ Օնիկ Գասպարյանը որոշեց արձագանքել վերը նշված հայտարարություններին. «Առաջարկում եմ Ազգային Ժողովում կազմակերպել փակ ձեւաչափով քննարկում 2020 թ. պատերազմի եւ հետպատերազմական իրադարձությունների վերաբերյալ՝ քննարկմանը ներգրավելով այդ ժամանակահատվածում պաշտոնավարած քաղաքական եւ ռազմական առանցքային պաշտոններ զբաղեցրած անձանց, ինչպես նաեւ՝ պետական եւ ծառայողական գաղտնիք պարունակող տվյալներին առնչվելու համապատասխան թույլտվություն ունեցող քաղաքական եւ հասարակական գործիչներին եւ զոհված ու անհետ կորած զինծառայողների հարազատներին: Ժամանակն է առերեսվել իրականության հետ եւ պայթեցնել շրջանառվող բոլոր ստերն ու անհարկի շահարկումները: Պատրաստ եմ զինված ուժերին վերաբերելի մասով ներկայացնել մանրամասն եւ բազմակողմանի փաստարկված վերլուծություն»:

Շատերի մոտ օբյեկտիվ հարց ծագեց՝ ի՞նչ չի ասել ԳԾ նախկին պետը 44-օրյայի քննիչ հանձնաժողովում Գասպարյանին»,- բարձրաձայնեց «Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար Տիգրան Աբրահամյանը: Որոշ գնահատականներով՝ իրականում թեման առաջին հերթին անհանգստացնում է Նիկոլ Փաշինյանին, նա գիտակցում է, որ սա իր դավաճանության մասին խոսակցություններն օրակարգ բերելու լավագույն պահը չէ՝ ընտրություններից մեկուկես ամիս առաջ: Ուստի բոլոր ճակատներով փորձում է հերքել, ինչպես Օնիկ Գասպարյանի հայտարարության մեջ է ձեւակերպված, «բոլոր ստերն ու անհարկի շահարկումները», այնպես էլ Սեյրան Օհանյանի ասածները:

ՊԲ նախկին հրամանատար **Մովսես Հակոբյանը**, մինչդեռ, երկրորդում է Սեյրան Օհանյանին եւ հակադարձում Օնիկ Գասպարյանին: «Սեյրան Օհանյանն ինչ հայտարարել է, ճիշտ է ասել, մի բան էլ քիչ է ասել: Նիկոլ Փաշինյանի պատասխանատվության տակ է եղել ոչ միայն Շուշիի հանձնումը, այլեւ բոլոր հարցերը, պատերազմի պարտությունը: Սեյրան Օհանյանին հարցրեք, ինքը մանրամասն կասի»,- մեզ առաջարկեց նա: Թե ինչու է, այդուհանդերձ, Օնիկ Գասպարյանը որոշել հերքել եւ դրան գումարած փակ ֆորմատով պարզաբանել հարցերը, Հակոբյանը դժվարացավ պատասխանել: Արձագանքելով Փաշինյանի այն հայտարարությանը, որ գեներալները փախել, ճողոպրել են պատերազմից՝ Հակոբյանն ասաց. «Լավ է անում, աչքներս էլ հանում է... եթե ինքն է երկրի ղեկավարը, ուրեմն լավ է անում»: Իսկ ի՞նչ է արել ինքը, որ Փաշինյանը երկրի ղեկավար չլինի: «Իրեն չեմ ընտրել... դա ավելին է, քան բավարար»:

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՏՆՈՒՄ Է՝ ՈՐ ՈՒԺԵՐՆ ԵՆ ԻՐ ՄՐՑԱԿԻՑՆԵՐԸ՝ ՊԵՏՔ Է ԴՐԱՆՈՎ ԱՌԱՋՆՈՐԴՎԵԼ

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«Հրապարակի» զրուցակիցը քաղաքագետ **Հակոբ Բադալյանն** է:

- Այս փուլում շատ քաղաքացիներ երկմտանքի առջեւ են կանգնել՝ ինչպես կատարել ճիշտ ընտրություն, որպեսզի թե՛ ընդդիմությանը հաջողվի պայքարել իշխանությունների դեմ, թե՛ ձայները չփոշիանան: Ձեր կարծիքով՝ ինչպե՞ս կատարել ընտրություն, ինչո՞վ առաջնորդվել, որ իշխանությունները չվերարտադրվեն, եւ անցողիկ շեմը չհաղթահարող ուժերին ձայն չտալ:

- Իմ գնահատմամբ՝ ընտրողի առջեւ այժմ կա մեկ հիմնական հարցադրում՝ փոխե՞լ իրավիճակը Հայաստանում, թե՞ ոչ: Եթե մարդը չի պատրաստվում եւ առհասարակ չունի Հայաստանում իրավիճակ փոխելու ցանկություն, ապա, բնականաբար, կամ ընտրությունների չի գնալու, կամ էլ գնալու է եւ իր քվեն տալու է ՔՊ կուսակցությանը: Եթե մարդը համարում է, որ Հայաստանում իրավիճակի փոփոխությունն անհրաժեշտություն է, ապա, իմ գնահատմամբ, այսօր իրավիճակն այնպիսին է, որ փոփոխությունն այն նվազագույն քայլն է, որ պետք է անել առանց բծախնդրության, թե որ տարբերակով փոխել իշխանությանը եւ այլն: Հարցը հետեւյալն է՝ փոխե՞լ, թե՞ ոչ: Եթե մարդն այն եզրահանգման է եկել, որ իշխանությանը պետք է փոխել, ուրեմն պետք է դա անել քվեն տալով այն ուժերին, ովքեր կարող են անցողիկ շեմը հաղթահարել եւ մտնել խորհրդարան: Սա է, կարծում եմ, ամենակարեւոր հարցը: Ես՝ ինքս, չեմ թաքցնում եւ ասում եմ, որ Հայաստանին անհրաժեշտ է իշխանության եւ դրա արդյունքում՝ իրավիճակի փոփոխություն, որովհետեւ այդ իրավիճակը խորանալու է այնքան, որ Հայաստանը դադարելու է գործնականում լինել պետություն սուբյեկտ, այլ կարող է վերածվել պետության դեկորացիայի:

- Տեսակետներ կան, որ Սամվել Կարապետյանի ուժը միանշանակ շատ ձայներ է ստանալու, սակայն մյուս ընդդիմադիր ուժերն այս առումով կասկածի տակ են, հասկանալի է, որ Գյումրու օրինակով ընդդիմությունը կարող է հաջողություն արձանագրել, եթե ընտրություններից հետո միավորվի: Դրա համար գոնե մի քանի ուժ պետք է հաղթահարի անցողիկ շեմը:

- Դժվար է մաթեմատիկական հաշվարկներով ասել, թե ինչպես քվեարկել, որպեսզի ընդդիմադիր բոլոր ուժերն անցողիկ շեմը հաղթահարեն, հասկանալի է, որ երաշխավորված բանաձեւ այստեղ չկա, եթե խոսքը մի քանի ուժի մասին է: Սակայն միասնական ընդդիմության թեման, ըստ իս, արդյունավետ թեմա չէ, քանի որ հասարակական տրամադրություններն ինքնին միասնական չեն, դրանք սուբյեկտիվ եւ օբյեկտիվ պատճառներ ունեն, սակայն փաստն այն է, որ միասնական չէ: Իրատեսական չէ՝ այդ առումով հասնել կուռ միասնականության: Պետք է փորձել հասնել առավելագույնի՝ մի քանի հիմնական ուղղություններով: Այդ ուղղությունների մասին հստակ հուշում է իշխանությունը: Մենք տեսնում ենք, որ իշխող թիմը՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, թիրախավորում է հիմնականում երեք ուժի՝ Կարապետյանին, Քոչարյանին եւ Ծառուկյանին: Սրանով իսկ իշխանությունը մատնում է, թե որ ուժերն են իր գլխավոր մրցակիցները: Քարոզչական նարատիվներն էլ, որոնք պարբերաբար կիրառում են, հարցի մյուս կողմն է.... եթե հասարակությունն ունի կողմնորոշվելու խնդիր, ապա հստակ կարող է այս համատեքստում կողմնորոշվել:

- Արման Թաթոյանը ո՞չ նախկին է, ո՞չ ներկա: Մեր հասարակությունը կարծես այդ փաստը կարեւորում է: Ի՞նչ շանսեր ունի, ըստ Ձեզ, Թաթոյանն այս պարագայում:

- Անկախ ամեն ինչից, Թաթոյանը զիջում է իր դիրքերով վերոնշյալ եռյակին: Կա նաեւ մեկ այլ խնդիր, այս ուժը չունի համակարգային կառուցվածք: Նոր ձեւավորված ուժ է, գուցե դրական ու հեռանկարային, բայց կարծում եմ՝ ընտրական պրոցեսում շատ կարեւոր է, թե ուժն ինչ հետագիծ ունի՝ որպես համակարգ, ինստիտուցիոնալ մեխանիզմ: Ակնհայտ է, որ այստեղ Թաթոյանի ուժը նոր է: Հասարակության համար այս հանգամանքները զգացնել տալիս են՝ վերաբերմունքի ձեւավորման իմաստով, սակայն գնահատել հնարավորությունները, շանսերը, ես չեմ կարող որեւէ հստակ պնդում անել:

- Քանի՞ ուժ անցողիկ շեմը կհաղթահարի՝ ըստ Ձեզ:

- Կարծում եմ, որ առավել մեծ հնարավորություններ ունի իմ նշած եռյակը: Սամվել Կարապետյանի հարցում կասկած չկա: Մեծ հավանականություն ունեն ԲՀԿ-ն ու «Հայաստան» դաշինքը: Չեմ կարծում, թե «Հայաստան» դաշինքը հաստատուն կերպով կարող էր մտնել այս պրոցեսի մեջ, չունենալով հստակ շանսեր: Նրանք ռոմանտիկ տրամադրություններով չէին մտնի պայքարի մեջ: Մնացածն էլ կախված է լինելու քարոզարշավի ընթացքից: Ցանկացած ուժ կարող է մեծ շանսեր ունենալ, սակայն այնքան վատ աշխատել, այնքան ապաշնորհ լինել, որ ամեն ինչ վերջում ջուրը գցի:

- Իսկ արեւմտամետ ներկայացող հայտնի ուժերը՝ Արման Բաբաջանյան, Արամ Սարգսյան եւ այլն....

- Ես կարծում եմ, որ նրանք անցնելու հնարավորություն ունեն, եթե իշխանությունն իրենց օգնի, սակայն իշխանությունը նրանց օգնելու ցանկություն չունի, հակառակը՝ իշխանությանն անհրաժեշտ են այդ էլեկտորատի ձայները:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻ ՕԱԹԵԹԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ՝ ՄԱՅԻՍՅԱՆ ՍԱՄԻԹԻՑ ԱՌԱՋ

Փաստաթուղթը մի շարք փակագծեր է բացում եւ ի ցույց դնում Հայաստան-ԵՄ հարաբերությունների իրական պատկերը: Այն, թե ինչ հուսահատ քայլերով են ՀՀ իշխանությունները փորձում սիրաշահել ԵՄ-ին եւ ինչպես են հնազանդորեն կատարում ամենաանհասկանալի առաջարկներն ու հրահանգները, եւ թե ԵՄ-ն ինչ խոնարհ ծառայություն է ակնկալում Հայաստանից:

Փաստաթղթում խոսվում է այն մասին, թե ինչպես պետք է ընթանա մայիսի սկզբին հրավիրված գագաթնաժողովը, եւ ինչ պետք է ասի ու անի հայկական կողմը, ինչպես պետք է իրեն պահի, ինչ հարցեր պետք է լուծի: Պարզ ասած՝ սա ուղեցույց է ՀՀ «ինքնիշխան» ղեկավարության համար, թե Եվրոպան ինչ է ակնկալում իրենից: Ճիշտ է՝ հիմնականում խորհրդատվության տեսքով է դա արվում, բայց նման փաստաթղթի գոյությունն ինքնին խոսում է այն անհավասար հարաբերությունների, այն տեր-ստրուկ կախվածության մասին, որ գործում է ԵՄ եւ ՀՀ իշխանությունների միջեւ: Փաստաթղթից ակնհայտ է դառնում, թե ինչքան է Եվրամիությունը կարեւորում երկու հարց՝ երկաթուղու հարցը, այն ամեն գնով ռուսական ընկերության ձեռքից խլելը եւ Թուրքիայի ու Ադրբեջանի հետ սահմանային անցակետերի փոխգործակցությունը՝ միջին միջանցքի համատեքստում: ԵՄ-ն թվարկում է գագաթնաժողովի ընթացակարգը, անելիքները. մտադրությունների նամակների ստորագրում, նախահամաձայնագրեր համապատասխան ոլորտներում, Հայաստանի համար հավանական օգուտների ցանկ եւ այլն՝ առաջարկելով գործընկերային կապերի ամրապնդմանն ու ինտենսիվացմանն ուղղված քայլեր, օրինակ՝ տրանսպորտի, էներգետիկայի, թվային ոլորտներում, ժողովուրդների միջեւ կապեր, հայկական սփյուռքի ներգրավում, Թումո կենտրոնի ներգրավում թվային կրթության պրոցեսներում եւ այլն:

Փաստաթղթում, օրինակ, մի քանի տեղ ասվում է. «Նախագահը կարող է հայտարարել.....». խոսքը, ենթադրաբար, Հայաստանի նախագահի կամ ՀՀ ԱԺ նախագահի, կամ գագաթնաժողովը նախագահողի մասին է: Այսինքն, անգամ նախագահին խոսքի ազատություն եւ իր ասելիքն ինքնուրույն որոշելու իրավունք չեն նախատեսում: «Հրապարակ»-ի տեղեկություններով, այս փաստաթուղթ-առաջարկի կազմմանը մասնակցել է ԵՄ բարձրաստիճան մի պաշտոնյա՝ Հոա-Բին Աջեմյանը, որը Հայաստանում պրոիշխանական որոշ բիզնեսմենների հետ սերտ կապեր ունի: Նա տարիներ առաջ եղել է ՀՀ-ում գործող ԵՄ պատվիրակության գրասենյակում համագործակցության բաժնի ղեկավարը, այդ թվում՝ 18-ի «հեղափոխությանը» նախորդած շրջանում, եւ հաճախ հյուրընկալվել է ԵՄ պատվիրակության գրասենյակում:

Վերադառնալով ԵՄ-ի, այսպես կոչված, առաջարկների փաթեթին, ներկայացնենք դրա բովանդակությունը: Փաստաթղթում անդրադարձ կա էներգետիկ ոլորտին: Ըստ եվրոպացիների՝ Հայաստանի էներգետիկ ոլորտը բախվում է էլցանցի անկայունության մարտահրավերին, ինչը բարդացնում է վերականգնվող էներգիայի հետ կապված մեծ ներդրումները, հոսանքի արդյունավետ կառավարումն ու պահպանությունը, քանի որ մարտկոցային էներգիայի պահեստավորման համակարգը բացակայում է, եւ կարիք կա վերազինել ու մոդեռնիզացնել էլեկտրացանցը: Եվրոպացի գործընկերներն իրենց օգնությունն են առաջարկում, ինչպես նաեւ՝ խորհուրդ են տալիս, թե նախագահը, սրա հետ կապված, ինչ ասի իր ճառում: Նաեւ այս ոլորտում մինչեւ 1 միլիարդ դոլարի ներդրումներ են խոստանում:

Առաջարկների փաթեթում անդրադարձ կա նաեւ թվային ոլորտին, արձանագրված են այս ոլորտում հայկական ընկերությունների գրանցած հաջողությունները, եւ որպես նպատակ նշված է՝ «Հայաստանի ինտեգրացիան եվրոպական թվային տնտեսությանը»: Առաջարկում են համագործակցության մոդելներ եւ ֆոնդ, որտեղ կարելի է մոբիլիզացնել մոտավորապես 60 միլիոն եվրո կապիտալ: Այս բաժնում նշվում են ոլորտում հայտնի մի շարք կազմակերպությունների անուններ, որոնց մեջ նաեւ NVIDIA-ն է. վերջինի փոխնախագահն օրեր առաջ Երեւանում էր՝ հանդիպում էր Նիկոլ Փաշինյանի հետ: Փաստաթղթում՝ գագաթնաժողովի նախապատրաստական աշխատանքների համատեքստում խոսվում է նաեւ, մարտից սկսած, Հայաստան ժամանող մարդկանց մասին: Հիշատակվում է նաեւ «Սինոփսիս Արմենիա» ընկերությունը, որի տնօրենն իշխանությունների հետ սերտորեն համագործակցող եւ Հանրային խորհրդի անդամ Հովիկ Մուսայելյանն է: Նա նաեւ Փաշինյանի հետ Կիրանցի պատի մոտ էքսկուրսիա գնացածների խմբի մեջ էր:

ԵՄ գործընկերները չեն անտեսել նաեւ հայկական սփյուռքը՝ իր կայացած կազմակերպություններով, ինչպես, օրինակ, AGBU-ն՝ Հայ բարեգործական միությունը: Նշված է, որ հայկական սփյուռքը՝ Եվրոպայում ունեցած ուժեղ համայնքներով ու բիզնեսներով, մշակույթի, հանրային քաղաքականության ոլորտներում իր ակտիվությամբ Հայաստանի ամենակարեւոր ռազմավարական հարստություններից է, իսկ AGBU-ն ունի կրթության, ձեռնարկատիրական աջակցության ու միջազգային համագործակցության երկարատեւ պատմություն: ԵՄ-ի ու AGBU-ի միջեւ համագործակցությունը կօգներ ավելի համակարգված մոբիլիզացնել սփյուռքը եւ ուժեղացնել կապերը Հայաստանի ու Եվրոպայի միջեւ: Եվ սփյուռքը կարող էր դառնալ կամուրջ Հայաստանի ու Եվրոպայի միջեւ: Ի դեպ, ՀԲԸՄ-ն 2023-ին հայտարարություն էր տարածել Արցախի ինքնորոշման իրավունքը հարգելու, իսկ անցած տարի կոչ էր ուղղել ՀՀ իշխանություններին՝ եկեղեցու ինքնավարությունը հարգելու մասին: ԵՄ-ի փաստաթուղթ-առաջարկների փաթեթում տեղ է գտել նաեւ Թումո կենտրոնի ու Դիլիջանի միջազգային քոլեջի հետ հնարավոր համագործակցության թեման: Գրված է, որ ցանկություն ունեն օգտվել Թումոյի փորձից, իսկ Դիլիջանի միջազգային քոլեջը՝ չլուծված կոնֆլիկտներով տարածաշրջանում, կարող է երկխոսության խրախուսման գործում ռազմավարական դեր խաղալ եւ հաջորդ սերնդին խաղաղ համագործակցության պատրաստել:

Այժմ անդրադառնանք այս փաստաթուղթ-առաջարկների փաթեթի ամենակարեւոր 2 կետին.

1. «Թուրքիայի ու Ադրբեջանի հետ սահմանային անցակետերի ռեաբիլիտացիա, հատուկ ուշադրություն տվյալների փոխանակման վրա (e-custom, e-freight), որպեսզի կառուցվի արդյունավետ ու ինտեգրացված միջին միջանցք: Որպեսզի միջին միջանցքը ծաղկի ու դիմակայուն լինի եւ ամբողջությամբ ինտեգրվի տարածաշրջանային երկաթուղային եւ ճանապարհային ցանցին՝ «նվազեցնելով ռուսական ազդեցությունը»՝ ասվում է փաստաթղթում: Եվ խորհուրդ են տալիս, թե ինչ կարող են հայերը հայտարարել, եւ թե ինչին կօգնեն այդ հայտարարությունները, օրինակ՝ «....կօգնի ներգրավել ԵՄ մասնավոր ներդրումներ»:

2. Եվ, իհարկե, երկաթուղու թեման, որը դամոկլյան սրի պես կախում են Հայաստանի գլխին: Առաջարկներ փաստաթղթում հստակ՝ սեւով սպիտակի վրա գրված է. ՀՀ-ն պիտի պարտավորվի վերացնել ռուսական մոնոպոլիան ու վերաազգայնացնել երկաթուղին:

Այս թեմային բավականին լայն անդրադարձ են արել: Օրինակ, գրում են՝ Հայաստանի երկաթուղային ցանցը ներկայում գործում է Հարավկովկասյան երկաթուղու (Ռուսական երկաթուղիների դուստր ձեռնարկություն) տրված 30-ամյա (2008-2038) կոնցեսիոն համաձայնագրի միջոցով: Ռուսական ազդեցությունը կրճատելու, ԵՄ ներգրավվածությունը մեծացնելու եւ ԵՄ պոտենցիալ ներդրումներ ներգրավելու, ինչպես նաեւ՝ ԵՄ տրանսպորտային պահանջներին հնարավորինս մոտենալու համար մի շարք առաջարկներ են անում: Օրինակ, ապամոնտաժել ազգային երկաթուղու մոնոպոլիան՝ առանձնացնել ռելսերի, ռելսագնացների ընկերությունն ու ընդհանուր կառավարումը: Այս մոտեցումը, ըստ ԵՄ-ի, կկրճատի Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից, նոր հնարավորություններ կբացի, ինչպես, օրինակ, ներդրումներ երկաթուղային ցանցերի լրացուցիչ սեգմենտներում (կոնցեսիոն կղզյակ), որպեսզի Հայաստանի երկաթուղային համակարգն ինտեգրվի տարածաշրջանային նայինին (Ադրբեջան եւ Թուրքիա), միեւնույն ժամանակ հեռու պահելով ռուսական երկաթուղային օպերատորին ռեաբիլիտացված ուղուց (Եվրաթունելի մոդելով): Եվրոպացի գործընկերները չեն մոռացել հիշեցնել, որ սրա համար Հայաստանից, հավանաբար, կպահանջվի կոմպենսացիա վճարել ռուսական ընկերությանը: Խոսվում է նաեւ այն մասին, որ փոփոխությունների ինչ-որ փուլում Հայաստանը կարող է փոխանցել ենթակառուցվածքի կառավարումը ռուսական ընկերությունից որեւէ անկախ միավորի: Ըստ ԵՄ գործընկերների՝ այս փոփոխությունը կստեղծի նպաստավոր միջավայր՝ ԵՄ ստանդարտներին համապատասխան ներդրումների համար:

Այս ամենում ԵՄ-ի շահն ակնհայտ է, բայց անհասկանալի է մնում, թե որտեղ է ՀՀ-ի շահը: Մանավանդ՝ եթե հաշվի առնենք, որ ներդրումների եւ օգնության նախկին խոստումները ԵՄ-ն դեռ չի կատարել: Եվ արդյո՞ք Հայաստանն ունի այնքան ռեսուրս, որ կարողանա կտրուկ հրաժարվել ՀՀ-ՌԴ հարաբերություններից ու համագործակցությունից՝ դրանից բխող բոլոր տնտեսական հետեւանքներով հանդերձ:

«Հրապարակ»-ի ձեռքի տակ է հայտնվել մի փաստաթուղթ՝ մայիսի 4-5-ին Երեւանում կայանալիք ՀՀ-ԵՄ գագաթնաժողովի հետ կապված:

Սամվել ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՍԱՄՄԱՆԱՄԵՐՁ ԲԵՐԴԸ «ՀԱՅՓՈՍՏԻՆ» ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ Է ԱՐԵԼ

Ապրիլի 16-ին, հիմք ընդունելով «Հայփոստ» ՓԲԸ-ի թիվ 2113/Մ/25 դիմումը եւ հաշվի առնելով Բերդ համայնքի ղեկավար Աստղիկ Հակոբյանի առաջարկությունը՝ Բերդ համայնքի ավագանին քվեարկությամբ որոշել է համաձայնություն տալ Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող, Բերդի Պառավաքար գյուղի 12 փողոց, 4 շենք հասցեում գտնվող վարչական շենքի երկրորդ հարկի N 12 սենյակը՝ 5.67 քմ մակերեսով, N 13 սենյակը՝ 12.13 քմ մակերեսով, ընդհանուր՝ 17.8 քմ մակերեսով, անհատույց օգտագործման իրավունքով, 5 տարի ժամկետով տրամադրելու «Հայփոստ» ՓԲԸ-ին՝ փոստային ծառայություններ իրականացնելու նպատակով: Այդ որոշմանը կողմ է քվեարկել ավագանու 13 անդամ, դեմ՝ 2, ձեռնպահ՝ 3:

Բերդի համայնքապետարանից տեղեկացա, որ մոտ մեկ տարի առաջ «Հայփոստ» ՓԲԸ-ի տնօրենը, լինելով Բերդի համայնքապետարանում, հայտնել է, որ իրենց ընկերությունը ֆինանսական վատ վիճակում է՝ աշխատավարձերը չեն կարողանում ժամանակին վճարել, կենսաթոշակները նախկինում «Հայփոստ» -ի միջոցով էին վճարվում, հիմա՝ բանկային քարտերով, եւ այդ պատճառով իրենց եկամուտները նվազել են, ուստի խնդրել է «Հայփոստի» տարածքն անվճար հիմունքներով տրամադրել իրենց:

Իսկ իրականությունն այն է, որ «Հայփոստ»-ը Հայաստանի տարածքում եւ արտերկրի հետ փոստային ծառայությունների մենաշնորհ ունի, ընկերության ղեկավար կազմն էլ շատ բարձր աշխատավարձեր է ստանում, օրինակ՝ «Հայփոստ»-ի տնօրենը՝ Հայկ Կոնջորյանի կինը, ամսական 10 միլիոն դրամ աշխատավարձ է ստանում: Սակայն Բերդ համայնքի սահմանամերձ Պառավաքար գյուղում փոստային բաժանմունքի համար 2 սենյակի վարձակալության փոքր գումարը չեն կարողանում վճարել՝ խնդրել են տարածքն անվճար տրամադրել:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԼՈՒՐՋ ՍԽԱԼ ԿԱՆԻ՝ ՄՏԱԾԵԼՈՎ, ՈՐ ԵՎՐՈՊԱՆ ԻՐԵՆ ԱՎԵԼԻՆ ԿԱՌԱՋԱՐԿԻ, ՔԱՆ ՌԴ-Ն

*«Հրապարակի» զրուցակիցն է քաղաքագիտության դոկտոր, ֆրանսիացի գրող, Եվրախորհրդարանի նախկին պատգամավոր **Այմերիկ Շոպրոդը**:*

- Հունգարիայում Օրբանը պարտվեց: Ի՞նչ տեղի ունեցավ, եւ արդյոք հնարավո՞ր է, որ նույն սցենարը կրկնվի Հայաստանում՝ հունիսի 7-ի խորհրդարանական ընտրությունների ժամանակ:

- Եկեք նախ հասկանանք, թե ինչ տեղի ունեցավ Հունգարիայում՝ ընտրությունների ժամանակ: Եվրամիությունն ակնհայտորեն աջակցեց Պետեր Մադյարին՝ նպատակ ունենալով այդպիսով ապահովել Վիկտոր Օրբանի պարտությունը, որը Եվրահանձնաժողովի թիվ մեկ թշնամին է: Գործողությունը, կարծես, հաջողվել է, քանի որ արդյունքում ընտրվեց Պետեր Մադյարը: Այնուամենայնիվ, մենք պետք է մի քայլ հետ գնանք եւ փորձենք հասկանալ, թե ինչու ընտրվեց Մադյարը: Նա, կարծես, ընտրվելուց հետո շատ արագ հեռացավ Եվրամիությունից եւ վերադարձավ Օրբանի քաղաքական գծին: Պետք չէ մոռանալ, որ Մադյարը մինչեւ վերջերս այդ կուսակցության անդամ էր: Հնարավոր է՝ նա պարզապես խաղ է խաղացել ԵՄ-ի հետ: Հնարավոր է, Օրբանը՝ ինքը, գիտակցում էր, որ իր դիրքերը 16 տարի իշխանության ղեկին լինելուց հետո սասանվում են, եւ քաղաքական ղեկավարության փոփոխության անհրաժեշտություն կա: Այդ դեպքում չեմ բացառում, որ Օրբանը կարող է գաղտնի գործարք կնքած լինել Մադյարի հետ: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա Եվրոպական Միությունն ակնհայտորեն նույն ցանկությունն ունի՝ աջակցել ՆԱՏՕ-ամետ եւ Ռուսաստանի նկատմամբ թշնամաբար տրամադրված թեկնածուներին: Ամենայն հավանականությամբ, ԵՄ-ն աջակցում է ներկայիս ՀՀ վարչապետին՝ ԵՄ-ի խոշոր գազամատակարար Ադրբեջանին հանգստացնելու եւ բազմաբեւեռ քաղաքականության կողմնակից ցանկացած թեկնածուի դեմ պայքարելու համար:

- Մայիսի սկզբին Հայաստանում հավաքվելու են եվրոպական երկրների ղեկավարները: Ամենայն հավանականությամբ, նրանք հակառուսական եւ պրոուկրաինական բովանդակությամբ ելույթներ կունենան: Ինչպե՞ս դա կազդի հայ-ռուսական փոխհարաբերությունների վրա:

- Ակնհայտ է, որ եթե ներկայիս Հայաստանի վարչապետը հստակ ուղերձ հնչեցնի, որ ինքը Հայաստանը հեռացնում է իր բնական աշխարհաքաղաքական եւ պատմական գործընկերոջից՝ Ռուսաստանից, վերջինս դա վատ կընդունի: Եկեք օբյեկտիվ եւ սթափ մտածենք: Հայաստանը Ռուսաստանի կարիքն ավելի շատ ունի, քան Ռուսաստանը Հայաստանի կարիքը՝ այնպես, ինչպես Եվրոպան ավելի շատ ունի Ռուսաստանի կարիքը, քան Ռուսաստանը՝ Եվրոպայի, ինչում ես համոզված եմ: Փորձեմ փաստերով հիմնավորել ասածս: Ռուսաստանի դեմ կիրառվող պատժամիջոցներից հետո, Եվրոպայի ու Ռուսաստանի միջեւ պառակտումից ի վեր Ռուսաստանի ՀՆԱ-ն աճել է, եւ նրա գործընկերությունն Ասիայի հետ նույնպես զգալիորեն աճել է: Ի հակադրություն դրա, Եվրոպայի տնտեսական պայմանները վատթարացել են, քանի որ ԵՄ-ն կորցրել է էժան էներգիայի հասանելիությունը, բացի այդ՝ իրավիճակն ավելի է սրվել Միացյալ Նահանգների եւ Իսրայելի կողմից Իրանի դեմ սանձազերծված պատերազմի պատճառով: Այսպիսով, ես կարծում եմ, որ Հայաստանը լուրջ սխալ կգործի՝ մտածելով, որ Եվրոպան իրեն ավելին կառաջարկի, քան Ռուսաստանը: Ռուսաստանը եւ Իրանը երկու կարեւոր տնտեսական եւ աշխարհաքաղաքական գործընկերներ են Հայաստանի համար:

- Ինչի՞ մասին էր Պուտին-Փաշինյան հանդիպումը՝ ըստ Ձեզ, ինչպե՞ս է ՌԴ-ն հիմա դիտարկում Հայաստանը, ու եթե Փաշինյանը շարունակի այս աշխարհաքաղաքական ուղղությունը, ինչպիսի՞ իրավիճակ կստեղծվի:

- Ռուսաստանի համար Հայաստանը բնական դաշնակից է՝ թե՛ քաղաքակրթական եւ թե՛ քրիստոնեական տեսանկյուններից: Սա հիմնարար կետ է: Ճիշտ է, վերջին տարիներին Ռուսաստանին հաջողվել է հավասարակշռություն հաստատել Երեւանի եւ Բաքվի միջեւ, բայց դա արվել է հիմնականում այն պատճառով, որ Մոսկվան չէր ցանկանում թույլ տալ, որ Ադրբեջանը լիովին շրջվի դեպի ՆԱՏՕ: Սակայն Ռուսաստանի հիմնական բնական գործընկերը Կովկասում Հայաստանն է: Ռուսաստանի աշխարհաքաղաքական ազդեցությունը Վրաստանի, ապա Հայաստանի եւ Իրանի միջոցով դեպի Մերձավոր Արեւելք, ունի գերակա աշխարհաքաղաքական նշանակություն: Մոսկվան հասկացել է, որ ԱՄՆ-Եվրոպա աշխարհաքաղաքականության նպատակն է՝ կտրել այս հյուսիս-հարավ առանցքը եւ մեկուսացնել Ռուսաստանը Մերձավոր Արեւելքից: Եթե վարչապետ Փաշինյանը Հայաստանը հեռացնի Ռուսաստանից, Հայաստանը ծանր տնտեսական եւ աշխարհաքաղաքական գին կվճարի: Հայաստանը Եվրամիությունից ոչ մի պաշտպանություն կամ առավելություն չի ստանա: Ավելին, ԵՄ-ն այլեւս միջոցներ չունի՝ դրանք առաջարկելու համար եւ միայն դատարկ խոստումներ է տալիս, այնինչ Հայաստանը կկորցնի Ռուսաստանի կողմից տրվող արտոնությունները: Սա կլինի մեծ սխալ, որը կարող է միայն լրացուցիչ լրջագույն տնտեսական եւ Ադրբեջանի հետ անվտանգային նորանոր խնդիրներ բերել Հայաստանին:

- Հետեւո՞ւմ եք, թե ինչ է կատարվում Հայաստանում: Քաղաքական հետապնդումներն ու բռնաճնշումները կարո՞ղ են տեղավորվել ժողովրդավարության շրջանակներում:

- Հայաստանից ինձ հասած հաղորդագրությունների համաձայն՝ ժողովրդավարությունը սպառնալիքի տակ է Փաշինյանի ռեժիմի ներքո: Ընդդիմադիր գործիչ Սամվել Կարապետյանը մի քանի ամիս տնային կալանքի տակ է, իսկ նրա հիմնադրած «Հզոր Հայաստան» կուսակցության ակտիվիստները ենթարկվում են հետապնդումների, վերջերս էլ տեղի են ունեցել ձերբակալություններ: Դժբախտաբար, օրենքի գերակայության այս խախտումները չեն դատապարտվում Բրյուսելի՝ Եվրոպական հանձնաժողովի նստավայրում: Եվրամիությունը լռում է: Փաշինյանը նրանց թեկնածուն է, եւ, որպես արդյունք, հայկական ժողովրդավարությունն այլեւս նշանակություն չունի նրանց համար:

- Ո՞վ պետք է հաղթի հունիսի 7-ի խորհրդարանական ընտրություններում, որպեսզի Հայաստանը որպես պետություն գոյատեւելու հնարավորություն ունենա:

- Մենք պետք է հստակ լինենք այս հարցում: Ես այլեւս վստահ չեմ, որ հունիսի 7-ին Հայաստանում հնարավոր կլինի անցկացնել իրական խորհրդարանական ընտրություններ: Ճնշումները սաստկանում են, ձերբակալություններ են տեղի ունենում: Արդեն հարց է առաջանում՝ արդյո՞ք «Հզոր Հայաստան»-ին եւ նրա ներկայացուցիչներին թույլ կտան մասնակցել այս ընտրություններին: Մենք դա կիմանանք առաջիկա շաբաթների ընթացքում, բայց իրավիճակը շատ մտահոգիչ է: Սակայն եթե ընտրության պայմաններն արդար լինեն, ինձ թվում է, որ Հայաստանի շահերից է բխում՝ աջակցել Սամվել Կարապետյանին: Նա իր կարողությունները ցույց է տվել անձնական կյանքում՝ կառուցելով հիանալի արդյունաբերական խումբ, եւ նրա քաղաքական եւ աշխարհաքաղաքական տեսլականը լավագույնն է: Նա ցանկանում է մի Հայաստան, որը հավասարակշռություն կհաստատի Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ եւ չի անտեսի իր պատմական գործընկերներին՝ միաժամանակ խորացնելով հարաբերությունները մյուս գործընկերների հետ:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ԲԱՔՈՒՆ ՌԴ-Ի ԻՐ ԼՈԲԲԻԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՈՐԾՈՒՄ Է ԸՆԴԴԵՄ ԱՐԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ

Դամացանցում եւ մամուլում չեն դադարում լուրերն այն մասին, որ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը շուտով հեռանալու է այդ պաշտոնից, իսկ նրա տեղը զբաղեցնելու է երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի նախկին խոսնակ, գրասենյակի նախկին ղեկավար եւ թիմակից Վիկտոր Սողոմոնյանը:

Արա Աբրահամյանից, ըստ որոշ խոսակցությունների, թե՛ ռուսական շրջանակներն են դժգոհ, թե՛ Ռուսաստանի հայ համայնքը, քանի որ նրա գործունեության արդյունավետությունը հայկական հարցերի համատեքստում մեծ չէ: Արա Աբրահամյանի գրասենյակից չեն ցանկանում մեկնաբանել այս խոսակցությունները՝ դրանք համարելով «հիմարություն», եւ հիշեցնում են, որ Արա Աբրահամյանն ընտրվել է որպես Ռուսաստանի հայերի միության նախագահ անցյալ տարվա դեկտեմբերի 7-ին Կրեմլում կայացած համագումարում, բարձրաստիճան հյուրերի աննախադեպ մասնակցությամբ: Նրան ողջույնի խոսք է ուղարկել անձամբ ՌԴ նախագահ Պուտինը:

«Եվ, հավանաբար, այնքան դժգոհ են, որ Աբրահամյանին նախագահին կից գործող տեղեկատվության եւ միջազգային համագործակցության գծով հանձնաժողովի նախագահ են նշանակել, որին անդամակցում են Զախարովան, Պրիմակովը, Կոնդրաշինը եւ այլք: Սա՝ զուտ որպես տեղեկություն, ոչ թե մեկնաբանություն»,- «Հրապարակին» ասաց միության փոխնախագահ **Լուսիկ Ղուկասյանը**: Նա նաեւ հայտնեց, որ Ռուսաստանի հայերի միությունն այս օրերին պատրաստվում է ապրիլի 24-ի հայերի ցեղասպանությանը նվիրված կոնֆերանսին, միության խորհրդի ընդլայնված նիստին, որի ժամանակ քննարկվելու են Հայ առաքելական եկեղեցուն աջակցելու հարցը, ուրիշ ակտուալ խնդիրներ: «Իսկ ԶԼՄ-ները թող մեկնաբանություններ փնտրեն այլ տեղերում: Ի դեպ, Արա Աբրահամյանի անունն օգտագործելով, շատերն են փորձել ճանաչում ստանալ, առայժմ՝ անարդյունք: Հայտնի փաստ է, որ Բաքուն վաղուց՝ ՌԴ-ի իր լոբբիի միջոցով գործում է ընդդեմ Արա Աբրահամյանի եւ հեղինակավոր հայ համայնքի, եւ ոմանք նրանց ասեղն են թելում, արդեն զարմանալի չէ, նկատի ունենալով իշխանությունների պրոադրբեջանական տրամադրվածությունը»,- նշեց Ռուսաստանի հայերի միության փոխնախագահը:

Օրերս քաղաքագետ Աղասի Ենոքյանը կարծիք էր հայտնել, թե Կրեմլը պատրաստվում է փոխել Աբրահամյանին, քանի որ «Ռուսաստանում հզոր հայկական համայնքի առկայության հանգամանքում արել էր նվազագույնը, եթե չասենք՝ ոչինչ, այդ համայնքի գոյությունը ցույց տալու համար... Այդ համայնքի գործունեությունն առաջին հերթին կախված է Կրեմլից, երկրորդ հերթին՝ ռուսաստանցի հայ օլիգարխներից: Համայնքի ղեկավարի նպատակները երրորդական են»: Սակայն մեր աղբյուրներն ասում են, որ գոնե մինչեւ հունիսի 7-ի ընտրությունները Աբրահամյանը մնալու է՝ այս փուլում նման փոփոխության չեն գնա, դե իսկ ընտրությունների արդյունքները կարող են շատ բան փոխել ինչպես Հայաստանում, այնպես էլ մերձավոր սփյուռքի հայ համայնքներում եւ կառույցներում:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ԲՈՒԼՂԱՐԻԱ

ՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ՎԱՐԺԵՑՎԱԾ ԿԱՊԻԿՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Մինչ Հայաստանի իշխանությունները սպառնում են դուրս գալ ԵԱՏՄ-ից եւ հանուն եվրաինտեգրման, ռուսական գազից անցում կատարել տեղական աթարին, Եվրոպայում հաղթում են բանականության եւ սեփական շահերով առաջնորդվելու կողմնակիցները: Հայաստանում շատերի ուշադրությունը գրավեցին ապրիլի 12-ին տեղի ունեցած Հունգարիայի խորհրդարանական ընտրությունների արդյունքները, որտեղ 16 տարի կառավարող Վիկտոր Օրբանի գլխավորած կուսակցությունը պարտություն կրեց, եւ երկրի վարչապետի աթոռը կզբաղեցնի ընդդիմադիր թեկնածու Պիտեր Մաջարը: Շատերը դա ընկալեցին որպես բռնապետության անկում եւ ընդդիմության հաղթանակ, մյուսները դրա մեջ տեսան եվրաչինովնիկության եւ սորոսականության հաղթանակ, որոնք անվերապահորեն պայքարում էին Օրբանի իշխանության դեմ, որն ինքնուրույն եւ շատ հարցերում Բրյուսելին հակադրվող քաղաքականություն էր վարում: Բայց մեկ շաբաթ անց՝ ապրիլի 19-ին, ԵՄ տարածքում տեղի ունեցավ ոչ պակաս կարեւոր եւ նշանակալի մեկ այլ իրադարձություն եւս՝ Բուլղարիայում տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում հաղթանակ տարավ 62-ամյա Ռումեն Ռադեւը, որին անգամ եվրոպական մամուլն է ներկայացնում որպես պրոռուսական կողմնորոշում ունեցող, միայն այն պատճառով, որ նա արտահայտվում է Ռուսաստանի հետ տնտեսական կապերը վերականգնելու եւ էներգետիկ համագործակցություն սկսելու օգտին: ԵՄ-ում առաջացած տնտեսական դժվարությունները միության անդամ երկրների հասարակություններին ստիպում են ընտրություն կատարել հօգուտ իրենց երկրների շահերի՝ մերժելով տարիներով քարոզվող կեղծ եւ հնարովի գաղափարները:

«Բուլղարիան եզակի դիրքում է, քանի որ մենք ԵՄ միակ երկիրն ենք, որը եւ սլավոնական է, եւ ուղղափառ: Սա պետք է օգտագործվի... եւ մենք իսկապես կարող ենք դառնալ կարեւոր օղակ այս գործընթացում, որը, վստահ եմ, վաղ թե ուշ կսկսվի՝ Ռուսաստանի հետ հարաբերությունները վերականգնելու համար». Բուլղարիայի վարչապետի հաղթած թեկնածուի այս խոսքերն է մեջբերում եվրոպական «Եվրանյուզ» հեռուստաընկերությունը՝ իր լսարանին համոզելու համար, որ չնայած Ուկրաինայի դեմ Ռուսաստանի շարունակվող ագրեսիային, բուլղարներն ընտրել են մի մարդու, որը կարեւորություն է տալիս Ռուսաստանի հետ ազգային-հոգեւոր եւ տնտեսական կապվածությանը: Բուլղարներին մեզ նման խաբել եւ համոզել էին, որ Եվրամիությունը համադարման է կոռուպցիայի, անօրինականության եւ աղքատության դեմ պայքարում: Գրեթե 20 տարի լինելով ԵՄ անդամ՝ Բուլղարիան ԵՄ-ին անդամակցել է 2007 թվականի հունվարի 1-ից, այդ երկիրը շարունակում է մնալ նույնքան կոռումպացված եւ անարդար, համարվելով ԵՄ անդամ ամենաաղքատ երկիրը: ԵՄ անդամ դառնալու դեպքում այդ երկրի ներդրումների ու տեխնոլոգիաների հոսքի մասին հեքիաթները մնացել են անցյալում, ավելին՝ ԵՄ-ին անդամակցությունը խանգարեց, որ այդ երկրի տարածքով անցնի ԵՄ-ին գազ մատակարարող գազամուղը: Ռուսներն առաջարկում էին Սեւ ծովի տակով գազամուղ կառուցել դեպի Բուլղարիա, գազի մի մասը կօգտագործեր Բուլղարիան, մնացածն իր տարածքով տարանցելով հարեւան երկրներ՝ Սերբիա, Հունգարիա, Հունաստան: Եվրահանձնաժողովը Բուլղարիային ռուսական էներգետիկ կախվածությունից ազատագրելու գաղափարի շրջանակներում, կտրականապես դեմ եղավ այդ նախագծին, եւ որպես այլընտրանք Ռուսաստանը Սեւ ծովի տակով գազամուղ կառուցեց Թուրքիա, եւ հիմա Թուրքիան է միլիոնավոր դոլարների շահ ստանում ռուսական գազի տարանցման համար:

Բուլղարները հասկացել են, որ երկրի եւ նրա քաղաքացիների շահերն ավելի կարեւոր են, քան ինչ-որ երեւութական գաղափարներ, ինչպիսիք են Ռուսաստանից էներգետիկ անկախությունը, էներգիայի մատակարարման աղբյուրների դիվերսիֆիկացիան կամ բռնապետական ծագում ունեցող էներգակիրներից հրաժարումը: Նույնիսկ Հունգարիայի նորընտիր, այսպես կոչված, պրոեվրոպական վարչապետ Պիտեր Մաջարն է հանդես գալիս իրատեսական եւ սեփական երկրի շահերն արտահայտող քաղաքականություն վարելու օգտին: Ընտրություններում հաղթելուց հետո նաեւ հայտարարել է, որ ո՛չ Հունգարիայի, ո՛չ էլ Ռուսաստանի աշխարհագրական դիրքը չի փոխվելու, հետեւաբար էներգետիկ ոլորտում առկա կախվածությունը պարտադրում է պահպանել երկխոսությունը Մոսկվայի հետ: Ավելին՝ Մաջարը սկսել է հեգնել եւ ծաղրել իր հաղթանակը կերտած եվրաչինովնիկներին եւ դրանցից ամենահայտնիին՝ Եվրահանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լեյենին: Նա Հունգարիայի հեռացող վարչապետ Վիկտոր Օրբանին առաջարկել է առաջադրվել Եվրոպական հանձնաժողովի նախագահի պաշտոնում՝ Ուրսուլա ֆոն դեր Լեյենի դեմ: «Օրբանը տեսլական ունի եւ կոշտ քաղաքականություն է վարում միգրացիայի հարցում: Նա ժողովրդականություն է վայելում սովորական մարդկանց շրջանում: Մինչ արեւմտյան քաղաքական գործիչները ստում էին ժողովրդին, հենց Օրբանն էր, որ նրանց ճշմարտությունն ասաց միգրացիայի մասին». ահա թե ինչպես է արտահայտվել հաղթած թեկնածուն իր երեկվա ընդդիմախոսի հասցեին: Նա չի խոսել ո՛չ բոմժացման, ո՛չ սնանկացման, ո՛չ կալանավորման եւ հետապնդման մասին, այլ գնահատելով իր նախորդի հանրային ազդեցությունն ու սկզբունքայնությունը՝ առաջարկել է զբաղեցնել Եվրահանձնաժողովի նախագահի պաշտոնը:

Ահա թե ինչպիսին են լինում երկրների իրական առաջնորդները, ինչպես են կարեւորում իրենց երկրների տնտեսական եւ քաղաքական շահը եւ ինչպիսի հետեւողականությամբ են այն պաշտպանում, ինչպես են վերաբերվում իրենց ընդդիմախոսներին: Պետության ղեկավարը, ազգի առաջնորդը չի կարող լինել մտավոր հետամնաց, չար ու մարդատյաց, թշնամուն հնազանդորեն ենթարկվող եւ դրսից կառավարվող մեկը, որը խոսում է ինչ-որ եվրոպական արժեքների կամ չափանիշների մասին՝ այդպես էլ չհասկանալով, որ աշխարհում արժեքներն ու չափանիշները համընդհանուր են, եւ եթե դու դրանց չես համապատասխանում, կարեւոր չէ, թե դու որտեղ ես ապրում՝ Հայաստանում, Եվրոպայում, թե հեռավոր Ավստրալիայում:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՀԱՐՑԱՇԱՐ՝ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

ՀՀ ԱԺ տակավին գործող նախագահ Ալեն Սիմոնյանը սոցկայքի իր էջում 3 հարց է ուղղել Ռոբերտ Քոչարյանին. «1) Երբ Վանաձորում դրական արձագանք էր տալիս այն հարցին, որ Հայաստանը պետք է կիսանախագահական լինի, դա ի՞ր անձնական կարծիքն է, թե՞ նաեւ դաշինքի մաս կազմող ՀՅԴ-ի: 2) Եթե «Հայաստան» դաշինքին հաջողվի հատել անցողիկ շեմը, պատգամավորները զբաղեցնելո՞ւ են իրենց հասանելիք պաշտոնները ԱԺ-ի հանձնաժողովներում, մասնակցելո՞ւ են նիստերին եւ մնացած օրենքով նախատեսված աշխատանքներին: 3) Ինքն անձամբ գալո՞ւ է ԱԺ, թե՞ «Հայաստան» դաշինք ընտրողներն իրականում ՀՅԴ են ընտրում»:

Ինչպես տեսնում եք՝ հարցերն ամբողջությամբ վերաբերում են «Հայաստան» դաշինքի ներքին խոհանոցին եւ կարող են ունենալ մեկ կտրուկ պատասխան՝ Ալեն, քե՞զ ինչ: Այստեղից էլ հավելյալ հարցեր են ծագում՝ դու ո՞վ ես, Ալեն, որ հետաքրքրվում ես «Հայաստան» դաշինքի անելիքներով կամ դաշինքի անդամների հարաբերություններով:

Այսուհանդերձ, Ալեն Սիմոնյանը ՀՀ քաղաքացի է եւ կարող է ամենատարբեր հարցեր հնչեցնել: Դա նրա իրավունքն է: Կարող է, օրինակ, հետաքրքրվել ՔՊ առաջնորդից, թե այս ընթացքում քանի թոշակառու է իր թոշակին ավելացված 10 հազարով օգտվել Երեւան-Լառնակա-Երեւան չվերթներից: ՔՊ առաջնորդն ասում էր՝ կարելի է 5 հատ «տուդա-աբռատնի» տոմս գնել: Ինչո՞ւ Ալենն այս հարցը չի տալիս իր առաջնորդին... Մի պարզ պատճառով՝ Ալենը համոզված է, որ իր առաջնորդի արած հայտարարությունն ապուշություն է:

Թուրքիա գնացիր վերջերս, Ալեն, մեծ-մեծ մարդկանց հետ նստեցիր-վեր կացար: Որեւէ մեկից հետաքրքրվեցի՞ր, թե ինչու Թուրքիան չի բացում Հայաստանի հետ սահմանը: Արցախը տվեցինք, միջանցքը տվեցինք... Ինչո՞ւ չեն բացում սահմանը: Վախեցա՞ր թուրքերից: Եղբայր, թուրքերից վախեցար՝ տեղակալիցդ հետաքրքրվեիր... Պուճուր Քըլըչից: Ամբողջ ժամանակ կողքին վերընկած է՝ նրանից չէ՞ս կարող հետաքրքրվել ժողովրդին հուզող այդ հարցի ճակատագրով:

Լիքը ուրիշ հարցեր կան, որ վայել են ՀՀ ԱԺ նախագահի պաշտոնն զբաղեցնող անձին: Այդ կալիբրի անձը, օրինակ, կարող էր վետո դնել այն կառավարության վրա, որի ղեկավարը հայտարարում է, որ կառավարությունն ինքն է: Բայց դու ասա՝ Ալեն Սիմոնյանը գոնե աչք թարթե՞լ է այդ հայտարարությունից հետո: Երեւի մի բան էլ չարախնդացել է թշվառ նախարարների վրա: Եվ ինչո՞ւ միայն նախարարների... դատախազի, դատավորի, ԱԺ ՔՊ-ական բիոմասսայի եւ մյուսների վրա, որոնք նստում-վեր են կենում վարչապետական փայտիկի հրահանգներով:

Ասվածը, կարծում եմ, լիուլի բավարար է սոցցանցում Ալեն Սիմոնյանին ուղղված երեք նորմալ հարց ձեւակերպելու համար: Բայց Ալեն Սիմոնյանին ուղղելու «աննորմալ» հարցեր շատ կան, որոնք կարելի է հնչեցնել արդեն այսօրվանից: Զորօրինակ՝ 1. Կգա՞, արդյոք, Նիկոլ Փաշինյանը ԱԺ, եթե ընտրությունների արդյունքներով կորցնի վարչապետի աթոռը: 2. Կգա՞, արդյոք, ՔՊ-ն ԱԺ, եթե չունենա բացարձակ մեծամասնություն: 3. Կաշխատի՞, արդյոք, ՔՊ-ն 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովում, որ կձեւավորվի նոր՝ ոչ ՔՊ-ական խորհրդարանում: 4. Եթե ՔՊ-ն այնուամենայնիվ հաղթահարի 4 տոկոսի շեմը, Նիկոլի ուսապարկերը կհամարձակվե՞ն հերոսաբար ներկայանալ գլխավոր դատախազի մասնակցությամբ ԱԺ նիստերին՝ իմանալով, որ նիստից հետո դատախազի ուղեկցությամբ են հեռանալու խորհրդարանի շենքից: 5. Քանի՞ ՔՊ-շնիկ կմնա Հայաստանում, եթե «Հայաստան» դաշինքը գա իշխանության եւ, ինչպես խոստացել է, սկսի ՔՊ-շնիկ առ ՔՊ-շնիկ պատասխանատվության ենթարկել Արցախի կորստի, հազարավոր զոհերի, Հայաստանի օկուպացիայի, աննախադեպ թալանի, հասարակությանը դեգրադացնելու, հայրենի հայի դեմ հանելու համար:

Հարցերը շա՜տ-շատ են, Ալեն, եւ, ինչպես տեսնում ես, ողջ հանրությանը հուզող:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan
@hraparak.am

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՓԱԿՎԱԾ ՉԷ, ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑՆ ԷԼ, ԲԱՅՑ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՃԻՇՏ Է ԱՆՈՒՄ

*«Հրապարակի» զրուցակիցն **Անահիտ Բախշյանն** է:*

- Ձեր էջում պարբերաբար «Ուժեղ Հայաստան» կուսակցության դեմ գրառումներով եք կիսվում, որոնք իշխանական քարոզիչները սիրով տարածում են: Դուք նախկին իշխանություններին, մանավանդ՝ Քոչարյանին, ատում եք եւ բազմիցս խոսել եք պատճառների մասին: Իսկ «Ուժեղ Հայաստանին» ինչո՞ւ եք քննադատում՝ ինչ են արել:

- Դեմ եմ բոլոր այն քաղաքական ուժերին, ովքեր դեմ են Հայաստան պետության ամրապնդմանը՝ տարբեր գործողություններով, արտահայտություններով եւ չերեւացող գործերով:

- Բայց նրանք դեմ են՝ ասում են, որ բալանսավորված քաղաքականություն են վարելու:

- Պետք չէ, որ իրենք խոստովանեն, տարբեր բաներով, քայլերով հակառակն են ապացուցում:

- Մի օրինակ կնշեք:

- Չէ:

- Իսկ Փաշինյանի հայտարարությունները, որ Արցախի հարցը փակված է, որ ցեղասպանության մասին չի կարելի խոսել եւ այլն, Հայաստան պետության օգտին են:

- Ընտենց բան չկա: Ցեղասպանության հարցը փակված չէ, Ղարաբաղի հարցն էլ, այո, էսօր ավել բան չենք կարող էդ մասին խոսել, որովհետեւ կորցրել ենք այն, պարտվել ենք: Պիտի ճանապարհ գնանք, զորանանք, ուժեղանանք, հետո մնացածը կերեւա….

- Նիկոլ Փաշինյանին առաջիկա ընտրություններում աջակցելո՞ւ եք:

- Ես հստակ չեմ կողմնորոշվել, բայց աջակցելու եմ բոլոր նրանց, նրանցից մեկին, որը հստակ մեզ պոկելու է ռուսական ազդեցությունից:

- Նիկոլ Փաշինյանն ամենաշատն է գնում Ռուսաստան, նրա օրոք Հայաստանն աննախադեպ տնտեսական կախվածության մեջ է հայտնվել Ռուսաստանից: Մի՞թե նա Հայաստանը Ռուսաստանից պոկում է:

- Նիկոլը հակառուս չէ, նա փորձում է Հայաստանի ինքնիշխանությունը պահել, ուժեղացնել, ինչոր տեղ ստացվում է: Ռուսաստան գնալը ռուսական ազդեցության նշան չէ, նա փորձում է խաղալ երկու թելի վրա, ինչը դիվանագիտության մեջ ընդունված բան է: Ես ավելի հակված եմ այդ դիվանագիտական մոտեցմանը:

- Խոսում եք ինքնիշխանությունից, իսկ Փաշինյանը Մոսկվայում ասաց, որ ինքն Արցախը ճանաչել է Ադրբեջանի կազմում, քանի որ ՌԴ նախագահն է ճանաչել: Սա ինքնիշխանության մասի՞ն է խոսում: Գուցե վաղն էլ Ռուսաստանը Հայաստանն Ադրբեջանի մաս ճանաչի, ՀՀ վարչապետը պետք է ընդունի՞ դա:

- Ոչ, ես չեմ հավատում:

- Բայց կա տեսանյութ՝ ինչի՞ն չեք հավատում:

- Այո, ես տեսել եմ, բայց նա Պրահայում ասաց այդ նախադասությունը, քանի որ նախկինի հետեւանքն է…. նախկինի հետեւանքը ստիպեց իրեն արտասանել այդ խոսքերը: Աշխարհի ոչ մի պետություն այս տարիներին այդպես էլ չճանաչեց Արցախի անկախությունը, նախկիններն այդպես էլ չմիացրին Արցախը Հայաստանին: Բալասանյան, Քոչարյան, դրանք արեցին: Բայց որպես անկախ պետություն, Արցախի համար ոչինչ չարեցին: Նիկոլը կանխում է ռուսների մտադրությունը: Ես երբեք Ռուսաստանին որպես Հայաստանի դաշնակից չեմ ընդունել: Ռուսաստանը շատ բան կարող է ասել, բայց Փաշինյանը կանխում է նրանց:

- Ռուսն է ավելի վատը, թե՞ թուրքն ու ադրբեջանցին:

- Էլ դիլեմա չկա: Կա Հայաստան, կա Հայաստանի ինքնիշխանության խնդիր: Եթե ռուսին չենք ընդունում, չի նշանակում, որ թուրքին ենք ընդունում:

- Բայց Փաշինյանը գնում է դեպի Թուրքիա:

- Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելը Հայաստանի անվտանգության մասն է: Մենք պետք է անենք քայլեր Թուրքիայի հետ, որպեսզի ճանապարհները բացվեն: Թուրքիան էլ ասում է՝ Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագիր կնքիր: Հիմա Նիկոլն էլ դա է անում:

- Ադրբեջանը 10 օր առաջ հայտարարեց, որ հայերն իրենց ցեղասպանության են ենթարկել: Նման հայտարարություն անողը խաղաղությա՞ն է ձգտում:

- Այո, Ադրբեջանը շատ բան է ասում: Էդ իրենք են մեզ ցեղասպանության ենթարկել: Բայց եթե մենք հավերժ այդ կեղծ նարատիվներով շարժվենք, կկորցնենք հայրենիք: Մեր պետությունը մեր արժանապատվության ամրագրումն է, բայց հերիք է, պիտի բոլոր հարեւանների հետ հարեւանություն անենք, համագործակցենք եւ ուժեղացնենք դիվանագիտական հարաբերությունները:

- Քիչ առաջ ասում էիք՝ մեզ պետք է Ռուսաստանից պոկվել:

- Ռուսաստանը, դե, մեր սահմանակիցը չէ: Ռուսների հետ սահման չկա, դիվանագիտական հարաբերություններ էլ ունենք, բայց հետո՞ ինչ: Հավերժական եղբայրության դաշնագիր էլ ունեինք, բայց ի՞նչ եղավ, նրանք մինչ այս մեր սահմանները չեն ճանաչել: Դրանցից ի՞նչ դաշնակից:

Ինչ ակնկալիքներ Իսլամաբադի բանակցություններից

Իսլամաբադի բանակցությունները բացառիկ կարելի է համարել, քանի որ ամենաբարձր մակարդակով դրանք առաջին բանակցություններն են, որոնք ընթանալու են ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ՝ 79 թ. իսլամական հեղափոխությունից ի վեր: Բանակցություններում անակնկալ միջնորդական առաքելությամբ հանդես է գալիս Պակիստանը, եւ նրա դերակատարումը ռեգիոնում կարծես աճում է: Նույնիսկ եթե բանակցությունները մնան անարդյունք, Պակիստանի համար զուտ իմիջային առումով դրանք կարեւոր են լինելու: Միջազգային առաջատար լրատվամիջոցներն ու վերլուծական կենտրոնները փորձում են հասկանալ՝ ինչ ակնկալիքներ ունենալ այդ բանակցություններից: Al Jazeera-ն ու The Guardian-ն ընդգծում են, որ Պակիստանն ավելի շատ հետաքրքրված է իր կարգավիճակը բարձրացնելու հարցով՝ որպես խաղաղարար միջնորդ: ԱՄՆ պաշտոնական տեսակետով՝ իրենք Իրանին արել են վերջին ամենալավ առաջարկը:

The New York Times-ը գրում է, որ Թեհրանի կողմից մինչեւ հիմա անորոշություն պահելը՝ կմասնակցեն բանակցություններին, թե ոչ, կապված է Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի կողմից ճնշման հետ: Եվրոպայում պահպանում են զգուշավոր լավատեսությունը՝ որ եթե երկխոսությունը շարունակվելու նույնիսկ փոքր հեռանկար կա, ապա էներգակիրների շուկան շատ արագ կարող է կայունանալ: Ռուսական Коммерсантъ-ը հատկանշական է համարում, որ Իրանի նոր գերագույն առաջնորդը թույլատրել է ապրիլի 22-ին կայանալիք բանակցային երկրորդ փուլին իրանական կողմի մասնակցությունը: Հիմնական պայքարը կգնա սանկցիաների վերացման եւ ակտիվների ապաարգելափակման հարցերի շուրջ, ըստ Forbes-ի ռուսական տարբերակի:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ԴԵՂՆԱԿՏՈՒՑ, ԱՆՓՈՐՁ, ԿԻՍԱԳՐԱԳԵՏ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԸ ՉՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ

Սարգիս ՍԵԴՐԱԿՅԱՆ
«Ֆերմերային շարժում» ՀԿ նախագահ, Ռազմավարական ծրագրերի քաղաքացիական համագործակցության ցանցի նախագահ

2018 թ. «հեղափոխության» ժամանակ Փաշինյանը հայտարարում էր, որ հեղափոխություն է լինելու նաեւ գյուղատնտեսության ոլորտում:

Բազմաթիվ գյուղացիներ եւ գյուղատնտեսության ոլորտի մասնագետներ, ոգեւորվելով Փաշինյանի այդ կոչից, կարծում էին, թե գյուղատնտեսության նախարարության նախկին բարձրաստիճան պաշտոնյաները պատասխանատվության կենթարկվեն, գյուղատնտեսության ոլորտից թալանված գումարները կոպեկ առ կոպեկ հետ կվերադարձվեն, իսկ իշխանություններն էլ դեմքով կշրջվեն դեպի գյուղը: Գյուղացիներն ակնկալում էին նաեւ, որ այդ «հեղափոխության» արդյունքում իրենց համար կստեղծվեն գյուղում ապրելու եւ աշխատելու նորմալ պայմաններ, կնվազեն գյուղական աղքատությունը եւ արտագաղթը, կզարգանան գյուղը եւ գյուղատնտեսությունը:

«Հեղափոխությամբ» ոգեւորված գյուղացիները որոշ ժամանակ անց մեծ հիասթափություն ապրեցին՝ տեսնելով, որ երկրում լուծարվեց գյուղատնտեսության նախարարությունը, արդյունքում՝ տեղի ունեցավ գյուղոլորտի որակյալ մասնագետների կադրային ջարդ, իսկ օպտիմալացման անվան տակ լուծարվեցին ոլորտի մի շարք կարեւոր ՊՈԱԿ-ներ՝ իրենց փորձառու մասնագետներով:

«Հեղափոխություն»-ից 8 տարի անց (չնայած երկրի իշխանություններն ամպագոռգոռ հայտարարում են՝ «ապագա կա, կա ապագա»), իրականում, կառավարության կողմից գյուղատնտեսության ոլորտում իրականացվում են գոյատեւման, կարկատան որոշ ծրագիր-միջոցառումներ: «Ժողովրդավարության բաստիոն» համարվող երկրում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ գյուղատնտեսության զարգացման ռազմավարական ծրագրերի շուրջ քննարկումներ, քաղաքական երկխոսություն, առողջ բանավեճեր կառավարության կողմից չեն կազմակերպվում:

Հիշեցնում եմ, որ մտահոգված երկրում իրականացվող անհեռատես եւ անարդյունավետ ագրարային քաղաքականությամբ՝ «Ֆերմերային շարժում» կազմակերպությունը, ԵՄ Արեւելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմի հետ համատեղ, վերջերս դիմել էր էկոնոմիկայի նախարարին՝ առաջարկելով կազմակերպել «Հայաստանում գյուղատնտեսության ներկա վիճակը եւ զարգացման հեռանկարները» թեմայով քննարկում: Նպատակը՝ գյուղատնտեսության ոլորտի դերակատարների միջեւ՝ պետական կառույցների, փորձագետների, քաղաքացիական հասարակության եւ ամենից առաջ գյուղացիների միջեւ ուղիղ երկխոսության ապահովումը՝ համատեղ գործնական եւ իրատեսական առաջարկությունների ձեւակերպումը, որոնք կապահովեն Հայաստանում գյուղատնտեսության կայուն զարգացումը:

Քննարկմանը նախատեսված էր հրավիրել ԱԺ պատգամավորների, Ագրարային համալսարանի ռեկտորին եւ միջազգային դոնոր կառույցների ներկայացուցիչների:

Նկատի ունենալով, որ էկոնոմիկայի նախարարը գյուղատնտեսության ոլորտի ներկայացուցիչ չի հանդիսանում, ագրարային քաղաքականության հարցերի պատասխանները մենք ակնկալում էինք լսել գյուղատնտեսության հարցերով էկոնոմիկայի նախարարի տեղակալներ Արման Խոջոյանից եւ Տաթեւ Սարգսյանից (ի դեպ, նրանք համակարգում են գյուղատնտեսության ոլորտի տարբեր ճյուղեր):

Համոզված եմ, որ էկոնոմիկայի նախարարի դեղնակտուց, անփորձ եւ կիսագրագետ տեղակալները չցանկացան մասնակցել քննարկմանը, որովհետեւ չունեին այն հարցերի պատասխանները, որոնք բարձրացվելու էին քննարկման ընթացքում: Չցանկացան անգամ լսել ոլորտի ներկայացուցիչների խորհուրդները, դիտողությունները եւ առաջարկությունները: Նման վերաբերմունքի հետեւանքով էլ ավելի կխորանան գյուղական աղքատությունը, երկրի պարենային անվտանգությունը եւ արտագաղթը:

Զարմանալ պետք չէ, սա «ժողովրդավարության բաստիոն» Հայաստանն է:

Հայաստանի նման աղքատ, ագրարային երկրում գյուղատնտեսության զարգացման համար անհրաժեշտ է հստակ մշակված, նպատակային եւ արդյունավետ գյուղատնտեսության զարգացման ռազմավարական ծրագիր, որը դժվար թե իրականացվի ներկայիս էկոնոմիկայի նախարարության որդեգրած քաղաքականության միջոցով:

«Տիկին պետքարտուղարը». սերիալ, որն արժե դիտել

Ամերիկյան «Տիկին պետքարտուղարը» դրամատիկ քաղաքական սերիալը, որի ռեժիսորն է Բարբարա Հոլը, ցուցադրվել է 2014-19 թվականներին: Այն ժամանակակից հեռուստատեսային քաղաքական սերիալային նախագծերի շարքում կարեւոր ձեռքբերում է համարվում եւ համադրում է քաղաքական դրաման, ընտանեկան սերիալը, գաղափարական դիսկուրսը, որի հիմնական ասելիքը քաղաքականության մեջ եւ իշխանության վերին էշելոններում կնոջ դերակատարումն է: Գլխավոր հերոսն Էլիզաբեթ Մաքորդն է՝ ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության նախկին վերլուծաբան, քաղաքագիտության պրոֆեսոր, որ նշանակվում է ԱՄՆ պետքարտուղարի պաշտոնում, եւ որի կերպարը կերտել է Թեա Լեոնին: Սերիալի սյուժեի առանցքում միջազգային ճգնաժամերի կարգավորումն ու դիվանագիտական բանակցություններն են, որոնք անցկացնում է Միացյալ Նահանգները: Սերիալում փորձ է արվում դրամատիզմն ու իրապաշտությունը համադրել: Մի կողմից՝ ցույց է տրվում, թե ինչպես են որոշումները կայացվում ամենաբարձր մակարդակներում, մյուս կողմից՝ կա որոշակի իդեալականացում, ինչը, ըստ քննադատների, սերիալը դարձնում է ավելի ուտոպիստական, ցույց տալով ոչ թե ռեալ իրականությունը, այլ այն, թե ինչպիսին պետք է լինի ցանկալի իրականությունը: Կան մասնագետներ, ովքեր կարծում են, որ «Տիկին պետքարտուղարը» սերիալում գլխավոր հերոսուհի Էլիզաբեթ Մաքորդը փորձում է բալանսավորել ընտանեկան կյանքն ու պրոֆեսիոնալ գործունեությունը: Կա կարծիք, որ սերիալում արտահայտված է «կինը կարող է ունենալ ամեն բան» պոստֆեմինիստական գաղափարը:

Սերիալը կարող են դիտել հատկապես նրանք, ովքեր սիրում են քաղաքական դրամաներ, հետաքրքրված են քաղաքականությամբ, էլիտաների ներսում եղած հարաբերություններով, վերին էշելոններում որոշումների կայացման մեխանիզմներով ու ընտանեկան-մարդկային հարաբերություններով:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԻՆՁ ՔՆՆԱԴԱՏՈՒՄ ԵՆ, ՎՆԱՍՈՒՄ ԵՆ՝ ՎԱՏ ԲԱՌԱՄԹԵՐՔՈՎ, ԲԱՅՑ ԵՍ ՀԱՄԵՐԱՇԽ ԵՄ ԻՄ ՍՐՏԻ, ՀՈԳՈՒ ՀԵՏ

- Դուք ապրում եք Ամերիկայի Միացյալ Նահանգներում, բայց ուշադիր հետեւում եք Հայաստանում կատարվող իրադարձություններին եւ մշտապես հանդես եք գալիս ՀՀ ներկայիս իշխանությունների հասցեին սուր քննադատությամբ: Բայց, որքան էլ իրավացի եք Ձեր քննադատություններում, կարծես, ավելի շատ հենց Ձեզ են քննադատում-քննարկում:

- Այո, քննադատում են հենց ինձ, եւ դա շատ է ազդում իմ կյանքի, իմ առօրյայի վրա, որովհետեւ լինեն անձնական, թե աշխատանքային հարաբերություններ, բնականաբար, այդ ամենն ազդում է այդ հարաբերությունների վրա: Քննադատում են ինձ, վնասում են ինձ՝ վատ բառամթերքով եւ այլն, բայց ես համերաշխ եմ ապրում իմ սրտի, հոգու հետ: Եվ համարում եմ, որ այդպես ճիշտ է: Խղճիս ու ինձ հետ արդար եմ: Դա ավելի արժեքավոր է, քան այն, ինչ անում են նշված որակի մարդիկ: Ինձ համար արժեքավոր են զոհված հերոսի՝ ինձ ուղղված գրառումը, արցախցու գրառումը, այն մարդկանց, որոնք իրապես գիտակցում են երկրին պատուհասած օրհասական իրավիճակը, հասկանում են կորուստների խորությունն ու չափը: Մնացած մարդիկ ինձ չեն հետաքրքրում, որովհետեւ նրանց մեկնաբանությունները մնայուն չեն:

- Մեզանում կամաց-կամաց տեղ է գտնում մի միտք, առաջարկ, որ Հայաստանին կին ղեկավար է պետք, որն ավելի հավասարակշիռ, սրտացավ, հեռատես ու շրջահայաց կլինի, քան տղամարդ ղեկավարներն են: Եվ հետո՝ Նժդեհն էր ասում՝ ազգի ճակատագիրը պետք է որոնել մոր ափերի մեջ: Օրինակ, Դուք անձամբ կարող էիք ինչ-որ տեղ, ինչ-որ բան առաջնորդելու պատասխանատվություն ստանձնել:

- Կգա այն ժամանակը, երբ կինն իսկապես իր արժանի դիրքն ու գնահատականը կունենա: Որովհետեւ, ցավոք սրտի, իմ կարծիքով, տղամարդկանց ստեղծած աշխարհն է խարխլել գլոբալ անվտանգությունը, նրանց ստեղծած իրականությունն է մարդկությանը պատճառել պատերազմներ եւ այլն: Ինչ վերաբերում է իմ դիրքորոշմանը, ես քաղաքականության համար շատ էմոցիոնալ եմ: Ես կին եմ, մայր եմ, քաղաքացի եմ, որն ունի քաղաքացիական դիրքորոշում, բայց ես մշակույթի մարդ եմ եւ ինձ չեմ պատկերացնում քաղաքականության մեջ: Նաեւ հավատում եմ, որ կլինի այնպիսի մեկը, որի հայացքը կսեւեռվի դեպի Հայաստանի այն պայծառ ապագան ու կգոյավորի այն ապագան, որի մասին մենք՝ բոլորս, երազում ենք: Ես նաեւ հավատում եմ, որ ունենալու ենք ծաղկուն եւ հրաշալի երկիր, որովհետեւ կա փայլուն երիտասարդություն, որոնց ինչքան էլ ՀՀ ներկայիս իշխանությունը փորձի խոչընդոտել, կեղծ օրակարգերով պիտակավորել, թունավորել, միեւնույն է՝ պայքարը հանուն ծաղկուն Հայաստանի, հաջողությամբ կպսակվի:

- Իսկ ո՞ւմ եք արժանի համարում այդ առանցքային ու բեկումնային պատասխանատվության համար: Քաղաքական դաշտում սուղ է ընտրությունը, մշակույթի, մտավորականության տիրույթից տեսնո՞ւմ եք նման մարդկանց: Օրինակ, Արաքս Մանսուրյան, Հասմիկ Պապյան: Մեծ մասը լռում են, ակտիվ չեն:

- Այո, ճիշտ եք: Քաղաքական դաշտում սղություն իսկապես կա: Բայց առավել ցավալի է, որ մտավորականությունն է լռում: Լուրջ խնդիր է, որ մտավորականները լռում են նման իրավիճակում: Մինչդեռ հենց մտավորականությունն է մեր ամբողջ պատմության ընթացքում առաջ մղել այն մտքերն ու գաղափարները, որոնցով մենք առաջընթաց էինք գրանցում, արժեքներ ստեղծում: Իսկ, ահա, այսօրվա նման լռությունը ես համարում: Կրկնում եմ. ես կարծում եմ՝ արժանիները կգան, որովհետեւ ունենք փայլուն երիտասարդություն: Վստահ եմ՝ հայի գենն այնքան ուժեղ է, որ չնայած իշխանությունների դավադիր քայլերին ու հակապետական գործողություններին, նոր սերունդը կպայքարի, կհաղթի եւ Հայաստանի մաքրամաքուր կերպարը կպահպանի: Եվ կգան այն ժամանակները, երբ արվեստագետներն իրենց բուն առաքելությամբ կզբաղվեն, կստեղծագործեն, գիտնականներն իրենց բացահայտումները կանեն, մարդիկ կպարեն մեր՝ բոլորիս երազած Հայաստանում:

*«Հրապարակի» զրուցակիցն ամերիկաբնակ դերասանուհի, հաղորդավար **Գայանե Ասլամազյանն** է:*

Արա ԱԼՈՅԱՆ

5 ԵՐԻՏԱՍԱՐԴ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՍՏՈՐԱԳՐՈՒՄ ԵՆ ԲՈԼՈՐ ԱՅԼԱՆԴԱԿ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՏԱԿ

Ճարտարապետ, քաղաքաշինարար եւ հետազոտող **Սարիատ Պետրոսյանին** մեկ հարց տվեցինք. «Երեւանի խորհրդանիշներից մեկը դարձած Երիտասարդական պալատը տարիներ առաջ սեփականացրին եւ հողին հավասարեցրին, թե՝ նորը պետք է կառուցենք տեղում, եւ այսպես՝ մի շարք կարեւոր ու գեղեցիկ շենքեր: Ո՞վ է այդ ավերակների պատասխանատուն, չկա՞ սեփականատիրոջ հետ ժամկետների պայմանագիր ու պարտավորություն, եւ արդյո՞ք խախտելու դեպքում չպետք է ետ վերցնեն, թե՞ այդպես կարող ենք ողջ քաղաքը դժոխքի բաժին դարձնել անվերադարձ կերպով»: Նա պատասխանեց.

- Բնականաբար, ետ վերցնելու մեխանիզմը կա, դրա համար պետք է լինի քաղաքական կամք: Իսկ քաղաքական կամքը լինում է այն ժամանակ, հենց որ կա անձնական եւ խմբային շահը: Օրինակ, Կասկադի դեպքը դրա դասական օրինակն է: Գաֆեսճյանի թանգարանից վերեւ տարածքը դատարկ էր մնացել երկար ժամանակ: Եղավ շահ, հետաքրքրություն, քաղաքական ցանկություն, եւ գիտենք, թե ինչ գործարք տեղի ունեցավ: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հետ կոալիցիա կազմած մյուս ուժի ղեկավարի՝ Վազգեն Սարգսյանի եղբայր Արամ Սարգսյանի ընտանիքն է հանդիսանում Կասկադի ամբողջ վերին հատվածի կառուցապատողը, այդ թվում՝ Կասկադի աջակողմյան հատվածի՝ մինչեւ Մատենադարան: Այդ հողը տրվել է կոնկրետ կառուցապատողի, որը կապված է Սարգսյանների ընտանիքի հետ: Այդտեղ կառուցելու են բազմաբնակարան շենքեր, տները վաճառելու են եւ այդ փողով ավարտելու են Կասկադը: Եվ ի՞նչ են կառուցում Կասկադի վրա՝ համերգասրահ: Երեւանը համերգասրահի կարիք ունի՞: Ոչ: Իսկ ինչո՞ւ: Որովհետեւ Երեւանի քաղաքապետը Սերգեյ Սմբատյանին խոստացել է համերգասրահ, որի համար վճարում ենք ես, դու, մենք: Քաղաքն ունի բազմաթիվ համերգասրահներ, որոնք մենք չենք կարողանում պահել, օգտագործել: Եվ սա ներկայացվում է իբր շատ լավ նախագիծ, որն իրականում շատ վատ նախագիծ է, որովհետեւ Կասկադի աջակողմյան հատվածը Երեւանի կանաչ հատվածներից մեկն է, որը պետք է կանաչապատվեր, որ մենք ունենայինք մաքուր օդ, նաեւ՝ հեղեղներ չունենայինք Կենտրոնում, իսկ դա կառուցապատվում է: Այսինքն, նշանակում է, որ մենք ունենալու ենք ավելի կեղտոտ օդ, ավելի շատ հեղեղային մակերեւույթներ քաղաքի կենտրոնական հատվածներում: Սա ընդամենը մի դրվագ է, որը կարող եմ տարածել Երեւանի տարբեր մասերի վրա, եւ կտեսնենք, թե մենք ինչքան փոքր ու մեծ սխալներով վատթարացնում ենք Երեւանի վիճակը:

Ամենացավալին այն է, որ մինչեւ 2018 թվականը եթե կարծում էի, որ մենք ունենք սերնդային խնդիր, այսինքն, խնդիրը սերունդների մեջ է, բայց 2018-ն ապացուցեց, որ սերնդային խնդիր չէ: Որովհետեւ, եթե այն ժամանակ ավագ սերնդի ճարտարապետներ էին մտնում նման գործարքների մեջ, հիմա երիտասարդ սերնդի ճարտարապետներն են: Դա արդեն փոխանցվում է սերնդեսերունդ: Այսօր Երեւանը չունի գլխավոր ճարտարապետ, բայց ունի 5 հոգանոց ճարտարապետների խորհուրդ՝ բաղկացած երիտասարդներից, ովքեր ստորագրում են այս բոլոր այլանդակ, սխալ որոշումների տակ: Եվ դա ամբողջովին հուսաթափ է անում, որ մենք երբեւէ կլուծենք այս խնդիրները, քանի դեռ ունենք նման իշխանություն, որի նպատակն է՝ ձեւեր թափեն, թե ժողովրդավարություն է, ձեւեր թափեն, թե մարդակենտրոն են, բայց իրականում աշխատեն շատ փող, աշխատեն մակերեսային ու պոպուլիստական լայքեր հավաքելու վրա, բայց ոչ խորքային դիտեն եւ լուծեն այս խնդիրները:

Հուսիկ Արա

ԲԱՔՎՈՒՄ ՀԻՍՏԵՐԻԱ Է ԲԵԼԳԻԱՅԻ ԵՎ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՑ

Ապրիլի 16-ին Բելգիայի Ներկայացուցիչների պալատը կարեւոր որոշում ընդունեց՝ սատարելով Հայաստանին եւ Արցախին: Միաձայն ընդունած բանաձեւն ուղերձ է հղում երեք կարեւոր ճակատներում.

ա) վերադարձի իրավունք. այն հստակորեն կոչ է անում արցախահայերին՝ վերադառնալու իրենց նախնիների տները՝ ընդգծելով, որ նման քայլը հնարավոր է միայն միջազգային անվտանգության ամուր մեխանիզմի միջոցով

բ) ինքնիշխան սահմանների վերականգնում. այն պահանջում է ադրբեջանական ուժերի անհապաղ դուրսբերում Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքից՝ պնդելով 2021 թվականի մայիսի 12-ի դրությամբ եղած սահմաններին վերադառնալու վրա

գ) ուշադրություն դարձրեք պատանդների ճակատագրին. այն բարձր մակարդակի ուշադրություն է դարձնում հայ ռազմագերիների եւ քաղաքացիական պատանդների, այդ թվում՝ Բաքվում ներկայում պահվող Արցախի քաղաքական ղեկավարության մարդասիրական ծանր վիճակին:

Համանման մի բանաձեւ էլ ապրիլի 17-ին ընդունել է Նիդերլանդների խորհրդարանը, որը բազմիցս եւ պարբերաբար անդրադառնում է վերոնշյալ խնդիրներին՝ տարբեր հայտարարությունների եւ բանաձեւերի միջոցով կոչ անելով Բաքվին՝ անհապաղ ազատ արձակել այնտեղ պահվող հայ գերիներին: Մասնավորապես, մեծամասնությամբ ընդունվել են Քրիստոնեական միություն կուսակցության պատգամավոր Դոն Սիդերի ներկայացրած երկու միջնորդությունները, չնայած կառավարության բացասական դիրքորոշմանը:

Առաջին միջնորդությունը վերաբերել է Հայոց ցեղասպանության ճանաչման հարցին: Այն կոչ է անում Նիդերլանդների կառավարությանը՝ իրականացնել նախկինում ընդունված խորհրդարանական որոշումները եւ հստակ քայլեր ձեռնարկել ճանաչման ուղղությամբ: Միջնորդության մեջ ընդգծվում է, որ Նիդերլանդները Բենիլյուքս երկրների շարքում միակն է, որի կառավարությունը դեռ պաշտոնապես չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Միեւնույն ժամանակ նշվում է, որ նման որոշումը չպետք է պայմանավորված լինի Թուրքիայի հնարավոր արձագանքով կամ Հարավային Կովկասում ընթացող քաղաքական գործընթացներով, մասնավորապես՝ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության բանակցություններով: Հատկանշական է, որ նախարարությունը խորհուրդ էր տվել՝ մերժել միջնորդությունը, սակայն խորհրդարանը գործադիրի առաջարկն անտեսել է եւ ընդունել է այն՝ լայն աջակցությամբ:

Երկրորդ միջնորդությունը վերաբերել է Ադրբեջանում պահվող հայ գերիների խնդրին: Այն կոչ է անում Նիդերլանդների կառավարությանը՝ ավելի ակտիվ գործել Եվրոպական Միության շրջանակներում՝ նպաստելու հայ ռազմագերիների եւ քաղաքացիական պահվող անձանց ազատ արձակմանը: Խոսքը հատկապես վերաբերում է Լեռնային Ղարաբաղի նախկին ղեկավարներին: Այս միջնորդությունն էլ է ընդունվել մեծամասնությամբ, ինչը վկայում է, որ խորհրդարանում կա լայն համաձայնություն հայկական հումանիտար եւ քաղաքական հարցերի շուրջ:

Բնական է, որ եվրոպական առաջատար երկրների օրենսդիր մարմինների անկաշառ որոշումները պետք է հարուցեին Բաքվի ջղաձիգ արձագանքը, որին թվում է, թե Հայաստանի հետ իր հարցերը լուծել է՝ հայկական վախվորած իշխանությունների ձեռքով, եւ հիմա վրդովվում է, որ իր հակահայ քաղաքականության դեմ եվրոպական հանրությունն է հանդես գալիս: Ադրբեջանի ԱԳՆ-ն Բելգիայի եւ Նիդերլանդների դեսպանների միջոցով խիստ բողոք է հայտնել այդ երկրներին՝ «նրանց խորհրդարանների կողմից ընդունված հակաադրբեջանական փաստաթղթերի վերաբերյալ, որոնք ազդում են երկրի ինքնիշխանության եւ Հայաստանի հետ խաղաղության գործընթացի վրա»: Բաքվում հայտարարել են, որ «այս փաստաթղթերը հիմնված են լիովին կեղծ եւ անհիմն գնահատականների վրա»: Հերթական անգամ խեղաթյուրելով պատմությունն ու իրականությունը՝ հերքել են «Հայաստանի տարածքային ամբողջականությունը խախտելու մեղադրանքները եւ հայկական ծագում ունեցող անձանց (խոսքը Բաքվում պատանդառված ու շինծու մեղադրանքներով դատապարտված Արցախի ռազմաքաղաքական ղեկավարների ու հայ մյուս գերիների մասին է՝ խմբ.) անօրինական ազատազրկման մասին պնդումները»: Հարեւան երկրում ավելի հեռուն են գնացել. Միլի մեջլիսում նույնիսկ կոչ են արել լուծարել Բելգիայի եւ Նիդերլանդների հետ միջխորհրդարանական աշխատանքային խմբերը: Ինչ վերաբերում է Բրյուսելի եւ Ամստերդամի որոշումներին, ապա դրանք վկայում են, որ այդ երկրների խորհրդարաններում կա լայն համաձայնություն՝ հայկական հումանիտար եւ քաղաքական հարցերի շուրջ: Այս քայլերը կարող են կարեւոր ազդակ հանդիսանալ թե՛ եվրոպական, թե՛ միջազգային հարթակներում հայկական հարցերի հետագա քննարկման եւ առաջխաղացման համար: Եվ սա ի հեճուկս ՀՀ ներկայիս իշխանությունների՝ հենց այս հարցերում որդեգրած ապազգային ու հանցավոր դիրքորոշման:

Արա ԱԼՈՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 22.04.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Պարոն Փաշինյան, ես, իհարկե, ոչ Ձեր համախոհը եւ ոչ էլ Ձեր ընկերն եմ, բայց դրա հետ մեկտեղ ես Ձեզ ոչ իմ եւ ոչ էլ հայ ժողովրդի թշնամին չեմ համարում: Ուղղակի ես Հայաստանի Հանրապետության այն «միամիտ» ընտրողն եմ, որը դեռեւս հավատում է, որ Ձեր տարածաշրջանայնացման քաղաքականությունում որոշ հանգամանքներ անտեսվել են ոչ թե միտումնավորությամբ, այլ՝ նկատված չլինելու պատճառով:

Բայց մինչեւ Ձեր տարածաշրջանայնացման քաղաքականությանն անցնելը, կուզեի մի քանի խոսք ասել, Ձեր իսկ բառերով ասած, ժողովրդի կողմից Ձեզ թուրք կամ ադրբեջանցի ասելու մասին: Հարցն այն է, որ, ի տարբերություն Ձեզ, պարոն վարչապետ, ինձ չի թվում, թե ժողովուրդը Ձեզ թուրք կամ ադրբեջանցի է ասում այն պատճառով, որ Դուք Թուրքիայի կամ Ադրբեջանի հետ առանց միջնորդների եք բանակցում: Ինձ թվում է, որ այդպես են ասում, որովհետեւ տեսնում են, որ Դուք՝ Հայաստանի տարեկան 40-45 միլիարդ դոլարանոց ապրանքաշրջանառության 26,5 միլիարդ դոլարի ապրանքաշրջանառությունն ապահովող երկրի՝ Ռուսաստանի հետ այնպիսի քաղաքականություն եք վարում, ինչպիսին անգամ Թուրքիան ու Ադրբեջանը չեն վարում:

Իհարկե, պարոն վարչապետ, քանի որ ես Հայաստանի «միամիտ» ընտրող եմ, ես հավատում եմ, որ Դուք այդպես եք անում ոչ թե Հայաստանին Ռուսաստանի հետ թշնամացնելու կամ Հայաստանը՝ Ռուսաստանին տարածաշրջանից դուրս մղող գործիք դարձնելու համար, այլ անում եք, որովհետեւ ուզում եք Հայաստանն ավելի շատ «ինքնիշխան» դարձնեք: Ես, պրն վարչապետ, քանի որ «միամիտ» ընտրող եմ, կարող եմ Ձեր այդ արարքն այդպես հասկանալ: Բայց անկեղծ լինելու համար ուզում եմ ասել, որ այնքան էլ վստահ չեմ, թե այն Ռուսաստանում եւս այդպես կհասկանան:

Իսկ գուցե, պրն վարչապետ, ժողովուրդը Ձեզ թուրք կամ ադրբեջանցի է ասում ոչ թե այն պատճառով, որ Դուք Թուրքիայի ու Ադրբեջանի հետ առանց միջնորդների եք բանակցում, այլ՝ այն, որ տեսնում է, որ Դուք Ռուսաստանից Հայաստան ուղարկվող ապրանքները չեք տեսնում, բայց փոխարենը շատ լավ տեսնում եք Ռուսաստանից Հայաստանին ուղարկվող ապրանքի՝ Ադրբեջանի տարածքով անցնելու «թույլ տալը» եւ դա Հայաստանի վրա ուզում եք վաճառել Ադրբեջանի ու Թուրքիայի խաղաղասեր լինելու գնով:

Ես, պարոն վարչապետ, Հայաստանի Հանրապետության շարքային ընտրողս, այդպես չեմ կարծում: Ես Հայաստանի Հանրապետության շարքային ընտրողս, Ձեր այդպիսի կեցվածքը չափազանցված թուրքասիրություն ու չհիմնավորված ադրբեջանասիրություն եմ համարում: Բայց Ձեր թույլտվությամբ ուզում եմ դրա մասին այսքանով սահմանափակվել եւ Ձեր, այսպես ասած, տարածաշրջանայնացման քաղաքականության մասին խոսել:

Պարոն Փաշինյան, իմացած լինեք, որ Հայաստանի ընտրողը տարածաշրջանի տարածաշրջանայնացմանը երբեք դեմ չի եղել ու երբեք էլ դեմ չի լինի: Բայց երբ նա տեսնում է, որ Ձեր եւ Թուրքիայի, Ձեր եւ Ադրբեջանի տարածաշրջանայնացման քաղաքականությունը նույնացվում է միայն 300 հազար ադրբեջանցիների վերադարձի հետ, բայց չի խոսվում Բաքվի ու Կիրովաբադի հայության իրավունքների մասին, երբ տեսնում է, որ Ձեր եւ Թուրքիայի, Ձեր եւ Ադրբեջանի տարածաշրջանայնացման քաղաքականությունից ներս խոսվում է միայն «Արեւմտյան Ադրբեջանի» մասին, բայց չի խոսվում Արցախի ու արցախահայության մասին, նա հասկանում է, որ թե՛ Ձեր, թե՛ Թուրքիայի եւ թե՛ Ադրբեջանի տարածաշրջանայնացումը ոչ թե տարածաշրջանի զարգացման, այլ Հայաստանին Բաթումի պայմանագիր պարտադրելու մասին է:

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am